Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11,460

Сергеев-Ценский

Наследник

9(47 925)
С-85

ՄԻՔԱԷԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

159

ԳՈՐԴԵԱՆ ՀԱՆԳՈՅՑԸ

(ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ)

ԳԻՆԸ Է 20 կ.

ԹԻՖԼԻՍ
1907

№ 32 «Յառաջ»-ի Գրադարան № 32 SEP 2011

ՄԻՔԱՅԵԼ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

9(=97)99)
31 ԱՍՐ 2007

ԳՈՐԴԵԱՆ ՀԱՆԳՈՅՑԸ

(ԹԻՒՐՔԱՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ)

ԹԻՖԼԻՍ
1907

13.06.2013
12716
11,46

ԹԻՖԼԻՍ
Տպարան „ՀՆԴՐԱԿԻ“ Մաղազինաց փող. 5.
1907 (228)

686-29 9

I.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՐԵՒՄՈՒՏՔՈՒՄ.

Ամերիկան եւ թիւրքանայ դատը։—Եւրոպական հայասէրների դիտումը եւ խորհրդաւոր մերժում-պատասխանը.—Ի՞նչ է տալիս մեր պրոպագանդը Արեւմուտքում։—Հայ բուրժուազիայի պատմական դաւաճանութիւնը։

Ռուզվելտն էլ մերժեց... [1] *Եւրոպայից յուսախաբ՝ արեւմտեան հայութիւնը յառել էր աչքերը դէպի անգրովկիանեան Հանրապետութիւնը։ Մեծ յոյսեր չէր տածում, բայց որոշ փաստեր գրաւական էին, որ տանջուող ժողովրդի ազիողորմ հաւաքը անարձագանք չը պիտի մնար Վաշինգտոնի հայրենիքում։ Միացեալ-Նահանգները եւրոպական պետութիւնների չափ շահագրգռած չէին «Հիւանդ մարդու» վիճակով, իսկ նախագահ Ռուզվելտը վերջին տարիներս վաստակել էր քաղաքակիրթ աշխարհի հանրային կարծիքի առաջ՝ ճնշածների ասպետի համարում։*

Մակերեսային դատողութիւն—անշուշտ։ Շահի փիլիսոփայութիւնը բէալական քաղաքականութեան հիմնաքարն է, Եւրոպայում, թէ Ամերիկայում, և իզուր իդէալիստ լաւատեսները ոգեորուած ծափահարում էին, սրանից երեք տարի առաջ, ամերիկական միջամտութիւնը յօգուտ Ռումանիայում ճնշուած հրէաների... Շահի քաղաքականութիւնը այդտեղ ևս խօսում էր բարձրաձայն. դա-

[1] Ներկայ գրուածքը—ընդարձակումն է մի շարք յօդուածների, որ մենք հրատարակել ենք «Յառաջ» օրաթերթում, Ռուզվելտի յայտարարած մերժումի առթիւ։ Հարկ է յիշեցնել, որ Ամերիկան Հանրապետութեան նախագահի մերժումը, ըստ երեւոյթին, անվերապահ չէ։ Տեղիք կայ յուսալու, որ չը-նայած պաշտօնական հրաժարման՝ Ամերիկայի պատգամաւորութիւնը պիտի աշխատէ մացնել ու պաշտպանել հայկական հարցը Հռոգի առաջիկայ Խորհրդաժողովում։ Մ. Յ.

դարեց հրէաների գաղթը դէպի Ամերիկա, լռեց այդ առթիւ յարուցած բողոքը ամերիկական քաղաքացիների մէջ—և միջամտութեան, մարդասիրութեան ձայնն է լռեց։

Հայոց նկատմամբ կար մի ուրիշ դրական հանգամանք։ Ամերիկան ի շարս ուրիշ պետութիւնների երկար տարիներից ի վեր «ազդեցութեան պայքար» է մղում Բոսֆորի ափերում և հայկական բարձրավանդակի վրայ։ Բողոքական միսիոնարները, դեռ ևս մեծ կոտորածներից առաջ, ծաւալել էին Փոքր Ասիայում մի տենդային գործունէութիւն։ Նրանք հիմնել են բազմաթիւ դպրոցներ, որոնք պատրաստել են մի ամբողջ սերունդ թարմ, կորովի հայ երիտասարդների, որոնցից շատերը կենդանի մասնակցութիւն են ունեցել մեր մատաղ ազատագրական շարժման մէջ։

Վերջին տասնամեակում յեղափոխական ու հակայեղափոխական փոթորիկների միջոցին այդ կրթական հիմնարկութիւնները շատ անգամ ենթարկուել են փորձութիւնների։ Վտանգուել են յաճախ նոյն իրենք միսիոնարները, և այդ հանգամանքը դրդել է ամերիկացիներին, ստիպել է նախագահ Ռուզվէլտին մի քանի անգամ—վերջին երկու տարիների ընթացքում—լուրջ ազդարարութիւններ անել Բարձր Դրան, հատուցում պահանջել։ Եւ ամեն մի այդպիսի ազդարարութիւն, ամեն մի սպառնալիք, ուղղած սուլթանին ամերիկեան հզօր հանրապետութեան կողմից՝ խրախուսել է հայ ժողովրդին, թելադրել է նրան, որ մի նոր ծանրակշիռ ֆակտոր է աւելանում քաղաքակրթած արէօպագում՝ սուլթանական կամայականութեան դէմ։ Մեղմ ժողովուրդ...

Եւ այդ ժողովրդի կրթուած, տարաղիր զաւակները վճռեցին օգտուել նպաստաւոր տրամադրութիւնից,—նրանք ձեռնարկեցին եռանդուն պրօպագանդի՝ ամերիկեան քաղաքացիների մէջ, մամուլի, միտինգների միջոցով սկսեցին յուզել հասարակական կարծիքը ի նպաստ Թիւրքահայաստանի։ Հրատարակուել սկսեց «Armenia» թերթը, անգլիերէն լեզուով և ամերիկացիների մասնակցութեամբ, ամբիոններից որոտաց եկեղ անուանի եւրոպացիների ձայնը, Իւրքէն Գոհիէ, Լեո Ռուա Բոլիս և ուրիշները բազմամարդ ժողովներում փաստաբանեցին հայկական դատը և հրաւիրեցին Ամերիկայի միջամտութիւնը։ Եկաւ հայ կաթողիկոսական պատգամաւորութիւնը «Դաշնակցութեան» Պարիզի ներկայացուցչի հետ և սիրալիր ընդունելութիւն գտաւ Ճերմակ տան մէջ. Ռուզվելտ վճռա-

կան կերպով խոստացաւ, որ պիտի գործ դնէ բոլոր հնարաւոր միջոցները՝ հայ դատի լուծման նպաստելու համար։

Վերջապէս, դիմումն եղաւ նոյն Ռուզվելտին՝ Ֆրանսիայի, Անգլիայի, Շվէյցարիայի և այլ երկրների ականաւոր քաղաքացիների կողմից, զրկեց նրան յիշատակագիր, որով նրանք խնդրում էին դնել տաճկահայոց հարցը Հաագի առաջիկայ Խորհրդաժողովի առջև։

Դրանից քիչ յետոյ Ռուզվելտ պօմպով հրատարակել տուեց ամբողջ արևմտեան մամուլի մէջ այդ եղակի յիշատակագիրը—մի բան, որ փոքր ինչ յոյս ներշնչեց հայ գաղութներին...

Եւ դարձեալ—իզուր, և դարձեալ անողորմ հիասթափութիւն... Երկու ամիս էլ յետոյ, հրատարակուեց—մերժում։

Ահա այդ մերժման ձևակերպութիւնը. «Թիւրքահպատակ հայերի տառապանքները բարձրաձայն օգնութիւն և դարման են աղաղակում։ Այդ տառապանքները վրդովել են համայն մարդկութեան մարդասիրական զգացումները և աշխարհը միացած է ողբալու և դատապարտելու այն ցեղային թշնամութիւնները, որոնք տիրում են Թիւրքիայի բնակչութեան տարբեր տարրերի մէջ։ Ոչ մի ճշմարտասէր մարդ չի կարող ականատես լինել նմանօրինակ դէպքերի՝ առանց ուզենալու ոյժի դիմել՝ նրանց առաջն առնելու համար։

«Ես անկեղծօրէն ցանկանում եմ, որ Միացեալ—Նահանգները ունենան այդ ոյժը. բայց նոյնքան անկեղծութեամբ ես համոզուած եմ, որ Միացեալ Նահանգների արած ջանքերը, որոնք անհրաժեշտաբար չեն ունենայ իրական ու հզօր միջամտութեան ոյժ, կ՚առաջացնեն քիչ բան կամ ոչինչ, և այդ ջանքերը պարունակելով իրենց մէջ յանդիմանութիւն ուրիշ ազգերի գործողութիւնների ու շարժառիթների նկատմամբ՝ մեծ բարիք չը կիտի արտադրեն այն դժբախտ էակների համար, որոնց ցանկալի կը լինէր նպաստել»։

Ի՞նչ հրահանգներ ենք քաղում անցքերից... Ի՞նչ է ուսուցանում մեզ այդ սիստեմատիկ անաջողութիւնը, որին հանդիպում է հայկական դատը արևմտեան աշխարհի առջև։

Թողնե՞լ պրօպագանդը և խաչ դնել մի անգամ ընդմիշտ հասարակական կարծիքի վրայ։ Ապարդի՞ւն հռչակել ամեն մի փորձ՝ յուզելու լուսաւոր ժողովուրդներին և նրանց հրամանատար առաջնորդներին։

Երբէ՞ք։ Նրանք, որոնք տրամադիր են այդպէս քարոզելու, նրանք թերևս առաջիններն էին, որ ժամանակին ամբակոծում էին

հայ յեղափոխական գործիչներին, յորդորելով նրանց՝ դարձնել իրենց ուշադրութիւնը արիւնոտ կրկէսից դէպի Եւրոպա, դէպի միտինգներ ու բանկետներ, պարլամենտական հարցաքննդումներ և մինիստրական ինտերվիւներ։

Եւրոպական պրոպագանդ,—այդպէս էր լոզունգը որոշ շրջաններում, դեռ 90-ական թուականներին, երբ Մեծ Հայաստանում առաջին անգամը հնչեց յեղափոխական մարտակոչը և նրա հետ ցայտեց առաջին արիւնը։

Եւրոպական պրոպագանդ,—աւելի թափով գոռացին նոյն շրջանները՝ ջարդի օրերին, այն սև օրերին, երբ թիւրքաց Հայաստանը դարձաւ մի վիթխարի սպանդանոց... Հայ հասարակութիւնը ժենակ էր թողել յեղափոխական մարտնչողներին, ժենակ, քչւոր, անզէն, անոյժ... Հայ հասարակութիւնը թերացել էր իր ամենատարրական պարտականութիւնների մէջ, նա խուլ էր ձևացել «զէնք ու օգնութիւն» աղաղակների հանդէպ, նա նեռել էր հայ մասսաներին ի սատ ճակատագրի, և երբ կատաբուեց հրէշային անանուն ոճիրը, երբ անզէն, անպաշտպան պարիսները տասնեակ հազարներով ընկան ուինի ու եաթաղանի տակ, այն ժամանակ մի որոտուն ճիչ բարձրացաւ հայկական բոլոր հօրիզոններում,—նոյն ինքներս ու ճոռոմ հասարակութիւնը, որ պատեհ ժամանակին դաւաճանօրէն երես էր դարձրել և՛ յեղափոխականներից, և հայ դատից, անէծք կարդաց յեղափոխական կազմակերպութիւններին, որոնք իբր թէ սատար էին եղել մեծ ողբերգութեան, զէնքի էին դիմել, փոխանակ աշխատելու Եւրոպայում, պարլամենտներում, դիւանատներում...

Վարագոյրն իջաւ այդ սև շրջանի վրայ և հայ մարտիկները դիմեցին նաև մի ուրիշ, տարբեր աշխատանքի։ Հայ բուրժուազիայի այդ պատմական դաւաճանութեան հանդէպ ատամները կրճատելով՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր մտաւոր և նիւթական ուժերի մի մասը ուղարկեց Եւրոպա։ Եւ ահա մի շարք փայլուն ձեռնարկներ... Հեղինակաւոր հրատարակութիւններ, հրապարակային միտինգներ ու մեծայուն կոմիտէներ՝ քաղաքակիրթ կենտրոններում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում, Բելգիայում, Շվեյցարիայում... Նաւաճեցին մեր դատի համար ֆրանսիական հասարակութեան ծաղիկը. ընդամենը մի երեք տարուայ ընթացքում, շնորհիւ հաւաքական աշխատանքի, արուեց աւելի, քան արուել էր 15 տարուց ի վեր Բրուսալիների ու Զերադների ձեռքով։

Այդ բոլորը ապարդիւն.—երբէք։ Մի յայտնի ժամանակ միտինգարութիւնը Ֆրանսիայում միանգամայն տրամադրուած էր դէպի հայասէրները. նրանք կարողանում էին առաջ բերել այս կամ այն քայլը յօգուտ թիւրքահայի, իրագործել էին տալիս այս կամ այն անյետաձգելի պահանջը։ Նրանց միջամտութեամբ՝ ֆրանսիական նաւերը 1901 թ-ին ուղարկեցին Ալէքսանդրետի ծոցը, արգելելու համար նոր անխուսափելի ջարդերը Կիլիկիայում, նրանց ջանքերով Ֆրանսիան աւելացրեց Մեծ Հայաստանում իր հիւպատոսների թիւը, յատկապէս վտանգաւոր վայրերում. նրանց շնորհիւ երբեմն նոյն իսկ կանգնեցուում էր դահճի ձեռքը Տաճկահայաստանում, հայ ինտելիգենտը ապատուում էր կախաղանից. մանրամասնութիւնները հարկ չը կայ յիշել...

Ողորմելի պալլիատիվներ—անտարակոյս։ Եւ երբ «Դաշնակցութիւնը» պրոպագանդի միսսիայով դիմում էր Եւրոպա, երբ մեր անմոռանալի առաջամարտիկը, դառն հիասթափութեան մէջ, զլուած հայ հասարակութեանը անվերջ կոչ ու յորդոր անելուց, երբ նա անէծքը շրթունքներին ման էր ածում իր տանջուած մարմինը, գնում էր բաղխելու ազդեցիկ եւրոպացիների դռները,—նա և իր բոլոր ընկերակիցները գիտէին, անշուշտ, որ իրենց ջանքերը չը պիտի պակուէին բաղձալի աջողութեամբ։ Պրոպագանդի որոշ օգտակարութիւնը գիտակցելով հանդերձ, նրանք միւս կողմից ուզում էին խելքի բերել այն նախապաշարուած «ամբոխային տրամաբանութիւնը», որը յամառութեամբ պնդում էր, թէ Եւրոպայում հասարակական կարծիք պատրաստելը մի պանացեում է, մի տեսակ համադարման հայ ժողովրդի անբաւ ցաւերին... Նրանք գիտէին, որ իրական միջամտութիւն հրաւիրելու և գորդեան հանգոյցը լուծելու համար՝ անհրաժեշտ է՝ և էական է՝ բուն երկրի գործունէութիւնը...

II

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՐԸ

Non possumus.—Ռուսաց բաղաքակա նութիւնը եւ հայ յեղափ. կոմիտեները.—Եւրոպական նաւերային կարծիքը եւ հայոց ազատագրական շարժումը.—Մի տխուր թիւրիմացութիւն.—Պալլիատիվներ եւ արտաքսական ռեֆորմներ։

«Ես անկեղծօրէն ցանկանում են, որ Միացեալ Նահանգ-

ները ունենան այդ ոյժը, բայց նոյնքան տնկեղծութեամբ ես հաժոդուած եմ, որ Միացեալ Նահանգների արած ջանքերը, պարունակելով իրենց մէջ յանդիմանութիւն ուրիշ ազգերի գործողութիւնների ու շարժառիթների նկատմամբ՝ մեծ բարիք չը պիտի արտադրեն այն դժբախտ էակների համար, որոնց ցանկալի կը լինէր նպաստել»...

Ո՞վ չը գիտէ, որ «ուրիշ ազգեր» ասելով, հասկացուում է գլխաւորապէս մէկը,—մէկ պետութիւն, որ վերջին 15 տարուայ ընթացքում օսմանեան բռնակալութեան պատուարն է եղել և խրախուսողը նրա բոլոր գազանութիւնների...

Եւ քանի՜ քանի անգամ այդ նոյն դարձուածը,այդ դժբախտ ու խորհրդաւոր ֆրազը արտասանել է այս ու այն դիպլոմատի բերանով։ Սոլսբիւրի, Բեքսֆիլդ, Դիզրայելի,—բոլոր նրանք, որոնք դիւանագէտ լինելով հանդերձ, պահպանել են մի մաքուր անկիւն իրենց սրտի մէջ, բոլոր նրանք, որոնք մետերնիխեան տրադիցիոնները շարունակելով հանդերձ՝ փորձել են դէթ մասամբ կատարել իրենց մարդկային, քաղաքացիական պարտականութիւնները, թեթևացնել լծի տակ գտնուող թշուառ, մորթոտուող ազգերի վիճակը,—նրանց բոլորի հայանպաստ փորձերը զարնուել են միշտ մի դաժան ոգու, մի հզօր ու բռնակալ ոյժի և խորտակուել... Այդ ոյժը ռուսական դիւանագիտութիւնն է...

Ռուսաստանը վճռական ֆակտոր է հայոց հարցի լուծման խնդրում և նրա դերը ճակատագրական է այդ հարցի էվոլիւցիայի մէջ։ Ամեն անգամ, երբ հայ ազատագրական շարժման թափերով յարուցուել է եւրոպական միջամտութիւն, ամեն անգամ, երբ այդ միջամտութիւնը, մասնաւորապէս Անգլիայի ջանքերով, ձգտել է ձևակերպել իրական, ազգու ռէֆորմների ծրագիր և իրագործել այն մեր դժբախտ երկրի ամենադժբախտ հատուածի մէջ—այդ ֆակտորը ծառայել է իր ամբողջ հասակով Եւրոպայի առաջ և դաժան անարտութեամբ հակադրել է միշտ դիւանագիտական սոսկալի մաքսիմը՝ Non possumus! (Չեմ կարող)։

Այդպէս՝ 90-ական թուականներից ի վեր։ Բէակցիայի հողմը, որ Ալէքսանդր III-ի գահակալութեան հետ փչեց անլուր մոլեգնութեամբ կայսրութեան ամբողջ տարածութեան վրայ, ունեցաւ իր զօրեղ անդրադարձումը նաև արտաքին քաղաքականութեան վրայ։ Հայը վտանգաւոր տարր էր հռչակուած կայսրութեան ներսում, նա վտանգաւոր էր և կայսրութիւնից դուրս, Տաճկաստանում, Պարսկաստանում, երկրագնդի բոլոր ծայրերում։

Յիշե՞լ արդեօք այն անողորմ հալածանքը, որ պօրեղծնօսցեվեան ամենակարող ըէժիմը ուղղել էր տաճկահայ ազատագրական շարժման դէմ, Տաճկաստանում և Անդրկովկասում, այն անհամար բանտարկութիւններն ու աքսորները, որոնցով Ռուսաստանի հին ըէժիմը ձգտում էր ջլատել հայ կոմիտէների գործունէութիւնը, հայ ռազմիկների տառնց այն էլ ցանցառ շարքերը, մի հալածանք՝ որ ի վերջոյ յանգեց Լօրանօվեան անսիրտ, տմարդի ինտրիգներին Տաճկահայաստանում և Գոլիցիններին ու Բըկօֆներին համիդավայել սխրագործութիւններին՝ Անդրկովկասում...

«Հայաստանը առանց հայերի»—ահա այդ Լօրանօվեան նշանաբանը։

«Մենք չենք ուզում մի երկրորդ Բուլգարիա մեր սահմանին կից»—ահա ռուսական դիւանագիտութեան մի ուրիշ սիրած դարձուածը։

Եւ այդ քստմնելի նշանաբանները հայաստանցու տունը քանդեցին... Պետերբուրգը միշտ անկարեկիր հանդիսատես եղաւ Հաժիդի բոլոր գազանութիւններին։ Պետերբուրգը քաջալերեց, սատար եղաւ 1895—96-ի մեծ ջարդերին։

Եւ ո՞վ է այն տխմարամիտ «քաղաքագէտը», որ կարծում է թէ Ռուսաստանը հէնց այդպէս էլ պէտք է վարուէր, որ նրա հայասպան քաղաքականութիւնը հետևանք էր իր կենսական շահերի, իր ռէալական քաղաքականութեան, որ այդ հանգամանքը տասնեակ տարիներ առաջ կարելի էր արդէն և պէտք էր նախատեսել...

Ռուսաստանը, անգամ բռնապետական Ռուսաստանը, եթէ չը լինէր կոյր ու կարճամիտ յանձին իր խղճուկ դիւանագէտների, եթէ հասկանար իր կենսական, պատմական շահերը, պէտք է հակառակ ընթացքը բռնէր, պէտք է պաշտպանէր աւերածից ու սրածութիւնից մի խելացի, քաղաքակրթուող ժողովուրդ, որ միշտ տածել է դէպի «քրիստոնեայ մեծ երկիրը» ջերմ, անխառն համակրանք միայն և որը ամբողջ առաջաւոր Ասիայում պիտի լինի միշտ ռուսական լեզուի, ռուսաց ապրանքների և ազդեցութեան մի գերազանց տարածող։

Բայց դժնդակ Լօրանօվշչինան չըմբռնեց այդ և թողեց, որ դարձնեն Տաճկահայաստանը ծայրէ ծայրէ մի գերեզմանոց։ Նա եղբայրական ձեռք մեկնեց Կարմիր Գազանին և անողորմ արշա-

ւանք կազմակերպեց տաճկահայ շարժման, կոմիտէների, գաղթականների և ամբողջ ժողովրդի դէմ։

Որքան արիւն ու արցունք է ափփուած այդ կարճատև պատմութեան էջերում... Եւ բախտի մի կծու հեգնութեամբ, դրսի աշխարհում, քաղաքակիրթ երկրների մէջ՝ Ռուսաստանն էր համարւում հայ կոմիտէների կազմակերպող, նրանց դրամ ու զէնք մատակարարող, նրանց քաջալերող ու դէպի գործ մղող... դէպի ապստամբութիւն՝ դարաւոր, երդւեալ հակառակորդի—սուլթանականութեան դէմ...

Զազիր, չարագործ թիւրիմացութիւն։ Բաւական չէին մերանլուր աղէտները—մենք դեռ ատւած էինք Եւրոպայում, որոշ շրջաններում։ Իբրև «վարձկաններ, իբրև լրտեսներ»... Իրանց իրաղեկ համարող յայտնի հրապարակախօսներ՝ բոլոր գոյների ու կուսակցութիւնների՝ Վիլհելմ Լիբկնեխտից մինչև դօքտոր Բելք, ծանուցանում էին ի լուր աշխարհի, թէ թիւրքաց Հայաստանում գործող հայ յեղափոխական կոմիտէները կաշառւած են Ռուսաստանից, թէ հետևապէս հայ շարժումները արժանի չեն առանձին յարգանքի և ուշադրութեան...

Այո՛, այն ժամանակ, երբ հայ հայդուկը, հայ ինտելիգենտքարոզիչը հազարաւոր խոչընդոտների դէմ մաքառելով, մի կերպ, գողունի անցնում էր սահմանը և նետւում գժոխքի բոցերի մէջ, այն ժամանակ, երբ «Դաշնակցական» կորիճները խիզախ անձնուրացութեամբ, մահը իրենց աչքերն առած, գրոհ էին տալիս դէպի օսմանեան կայսրութեան ամուր պատւարը, Բանկ Օտտոմանը, մի մասը կոտորւում, միւս մասը համարձակ պահանջներ գնում Եըլդզի ճիւաղին,—նոյն այդ ժամանակ Եւրոպայում յեղափոխական սոցիալ-դեմոկրատներն մնգամ յօդւածներ էին գրում ռուսական «ինտրիգների» մասին Տաճկաստանում և իրենց արհամարհանքն էին շպրտում հայ «վարձկան» յեղափոխականների երեսին։ Երբէք առաջադէմ, լուսաւոր տարրերի գիտակցութիւնը այն աստիճան չէր խաւարել, երբէք այնքան անողորմ պրոֆանացիայի չէր ենթարկւել մի գաղափարական, ազատարար շարժում։

Նոյն ինսինուացիաները Ռուսաստանի իբր—աջակցող դերի մասին հայ կոմիտէների նկատմամբ՝ կրկնւեցին գերմանացի հնագէտ Բելքի և ուրիշների կողմից և ի վերջոյ անցան Երիտասարդ Թիւրքիայի օրգանների մէջ (մասնաւորապէս Ահմէդ Բիզայի

«Մէշվերէթի»), որոնք բաւական շահագործեցին նրանց՝ հայկական շարժման դէմ։

Վալդէյար Բելք մի քանի անգամ Կովկասով անցել է Տաճկաստան, հայ վիլայէթներում հնագիտութեամբ պարապելու։ Եւ իբրև արդէն «իրաղեկ» մարդ, նա Գերմանիա վերադառնալուց յետոյ, համարձակութիւն առաւ իր վրայ՝ ապացուցանելու համաշխարհային մեծ օրգանում, «Frankfurter Zeitung»-ի էջերում, որ հայկական հրոսակախմբերի կազմակերպումը, նրանց անցքը Կովկասից Թիւրքիա՝ որ այդ բոլորը ռուս կառավարութիւնը ոչ միայն տանում, հանդուրժում է, այլ և ուղղակի նպաստաւորում։

Դօքտոր Բելքի ամենախոշոր արգումենտն այն է, որ սահմանի ռուսական պահակները գտնւում են իրարից ընդամենը մէկ վերստ հեռաւորութեան վրայ, որ բացի դրանից, զինւորները գիշերով շրջում են, կօնտրաբանդը արգելելու համար, որ հետևապէս անհնարին է հայ հրոսակներին՝ անցնել սահմանը առանց ռուսական իշխանութիւնների գիտութեան։

Պատւարժան հնագէտը խիստ մոլորւում է, դուրս գալով իր սեփական մասնագիտութիւնից։ Նա փոքր ինչ բարձր է գնահատում ռուս սահմանապահ զինւորների աչալրջութիւնը և փոքր ինչ ցած է գնահատում հայ ֆէդայու հնարագիտութիւնը։

Դօքտոր Բելք հասնում է այնտեղ, որ նոյնիսկ պնդում է, թէ «Դաշնակցական» խմբերի հրացաններն անգամ տալիս է ինքը ռուս կառավարութիւնը...

Բայց հայ յեղափոխականը երբէք չի մոռանայ մասնաւորապէս Լիբկնեխտի ու նրա վարած Vorwärts-ի սիստեմատիկ, կոյր ու ագէտ արշաւանքը հայկական շարժման դէմ, որ ի վերջոյ զայրոյթ յարուցեց նոյնիսկ Սոցիալ-դեմոկրատիայի շարքերում։ [1]) «Դաշնակցականները» չեն մոռանայ մանաւանդ Vorwärts-ի մի թունաւոր, անօրինակ յօդւածը «Der Rubel am Reise» վերնագրով (Ռուբլին ուղևորութեան մէջ), որը հրատարակւեց նոյն այն ժամանակ, երբ «Դաշնակցութեան» յայտնի խումբը Բանկ Օտտոմանի դրամա-

[1]) Երբ Բօգա Լիբքնեխտբուրգ Դրէզդէնի «Sächsishe Arbeiter—Zeitung—ի մէջ ուրիշների հետ իրաւամբ յարձակւում էր Vorwärts-ի խմբագրապետի դէմ, Աբեկեան հարցի առթիւ նրա անփոփոխ ու շարլոն տեսակէտի համար—ձերունի Լիբկնեխտ պատասխանում էր, թէ ինքը Մարքսի հետ դեռ 60-ական թուերից են ուսումնասիրել ամեն բան և թէ իր ասածները անպայման ճշմարտութիւն են։

յից յետոյ, Ֆրանսիական Ժիրոնդնաւով փոխադրուում էր Եւրոպա...

Այդպէս անփառունակ, այդպէս արհամարհուած էր թուում հայկական շարժումը դեռ 1896-ին, եւրոպացիներից ոմանց աչքում։

Եւրոպական մեր պրոպագանդի կատարած անժխտելի ծառայութիւններից մէկն այն եղաւ, որ փարատեցինք այդ տխուր կասկածները և վերականգնեցինք հասարակական կարծիքի առաջ հայ ռազմիկի, հայկական շարժման հմայքն ու պատիւը։

* * *

Ռուսաստանը, ասացինք, վճռական ֆակտոր է թիւրքահայոց հարցում։ Հապա ինչպէ՞ս է, կը հարցնէ ընթերցողը, որ հայ կոմիտէները չէին վստահում, չէին մատնուում յոռետեսութեան, լաւ գիտակցելով Ռուսաստանի այդ ճնշող դիրքը, այդ մշտնջենական, ամեն ճիգ խորտակող դիմադրութիւնը...

Պատճառն նրանց, որ չէին վստահում։ Վստահելու տեղիք կար, անշուշտ։ Բայց կուիշոտիզմը դարձեալ յուզում էր, ելեքտրականացնում գաղափարի անխոնջ զինուորներին։ Աբդիւլ Համիդի ջանքերով ստեղծուած տարտարոսը անդրդուելի ճակատագրականութեամբ դուրս էր կոչում հայ ժողովրդի խորունկ ծալքերից Վազգէններին ու Սերոբներին, որոնք մի սուրբ մոլեռնութեան մէջ արհամարհում էին դիւանագիտական տմարդի խաղերը և զէնքը ձեռին ապաւինում էին խրոխտ լեռներին...

Մի պաշտելի դիւցազներգութիւն, որ իր անօրինակ խոչընդոտներով ու արհավիրքներով թերևս եզակի է 19-րդ դարի ազատագրական շարժումների պատմութեան մէջ։ Անօրինակ, և որքան տխուր, որքան եղերական... Արտաքին աշխարհը ոչինչ չը գիտէր ազատագրական այդ հոյակապ թռիչքների մասին. ամեն ինչ խեղդուում էր այն խուլ, հեռաւոր անկիւններում՝ թէ տանջանքի հեծեծանքները, թէ հերոսութեան ճիգերը... Հարկաւոր էր, որ բախտի բերմամբ մի զօքսոր Բելք գար՝ հայկական բարձրավանդակի վրայ հնագիտական ուսումնասիրութիւններ կատարելու, որպէսզի Սերոբ-փաշայի անման քաջագործութիւնների ձայնը հասնէր Եւրոպային, արձագանք տար մեծ մամուլի էջերում։ Հարկաւոր էր, որ նոյնպէս դիպուածով մի գերմանացի պատոր Ֆիշեր երևան գար 1897-ի ամառը թիւրք-պարսկական սահմաններում, որպէսզի Խանասորի արշաւանքը փառաբանէր գերմանական հանդէսի մէջ, որպէս Մօլտկէան կանոնաւոր ռազմափորձ։

Իսկ Բանկ Օտտոմանի դէպքը, որին ակնատես եղաւ բաղաքակիրթ աշխարհը, հնչակեց անգլիական մի օրգանում, որպէս ամենամեծ դաւադրութիւնը նորագոյն ժամանակներում։ Պաշտօնական դոկումենտները—Կապոյտ ու Դեղին գրքեր—գրեթէ միշտ պատանձել են Հայաստանում կատարուած ապստամբական կռիւների մասին։ Որտե՞ղ է տեսնուած այդքան յամառ և յուսահատ դիմադրութիւն, այդքան ծանր, աղէտալի պայմաններում։ Ո՞ր ժողովուրդն է գործել այդքան սարսափեցուցիչ էանոգրաֆիական և քաղաքական-դիւանագիտական մթնոլորտում...

Անսահման անձնուիրութիւն և ճշմարիտ-հերոսական ճակատամարտներ. նպատակը...

Հայ ռազմիկը անպայման լաւատես չէր, ոչ էլ յոռետես։ Նա ֆանատիկոս և ամբարիշտ «ծայրայեղ» էլ չէր, արեան Աստծու երկրպագու, կուելու արեստի սիրահար, խառնակ, տարերային հոսանքով տարուած։

Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ համախմբում ու ղեկավարում էր այդ ցիրուցան պայթուցիկ տարրերը, ունէր նոստակի պարզ ու յստակ գիտակցութիւն։ Նա երազների, ուտոպիաների եռանից չէր ընկած։ Կատաղի և ծայրայեղօրէն անձնուրաց իր կուի մէջ՝ նա ցոյց էր տալիս և քաղաքական պատշաճ հասունութիւն, զգաստ ռէալիզմ, չափաւորութիւն իր պահանջների մէջ։ Որքան դիւրութեամբ հայ յեղափոխականը գիտէր վարժեցնել հրացան ու ռումբ՝ նոյնքան դիւրութեամբ նա գիտէր բանակցել դիպլոմատների հետ։

Մի էպիզոդ մեր շարժումներից, մի փոքրիկ նմուշ թող վկայէ մեզ, թէ որքան հիմնաւոր են մեր թշնամիների 15 տարուց ի վեր խնամքով տարածած մեղադրանքները՝ թէ հայ յեղափոխական-կազմակերպութիւնը ուտոպիստ է, թէ նա անհնարին բաներ է պահանջում, թէ նա զառանցում է ինչ որ անկախ հայկական թագաւորութեան մասին, թէ նա կուում է ինչ որ խելագար ու տղայամիտ ֆանատիկոսութեամբ։

1895 թ. սեպտեմբերի 30-ին է, «Բաբ-Ալի»-ի մատսային ցոյցը։ Կ. Պոլսի հայերը խաղաղ, անզէն ցոյց են կազմակերպում, որ և անմիջապէս խեղդուում է հայերի արեան մէջ։ Ահա քաղաքօրէն հնչակեան տեղական կոմիտէի այդ առթիւ դեսպաններին ուղղած աղերսագիրը.

Կ. Պոլսի հայ ազգաբնակութիւնը և մայրաքաղաքում գտնուող գաւառա-

ցի հայերը միահամուռ համաձայնութեամբ կազմակերպել են ցույց, հանդիսաւոր կերպով բողոքելու համար մեր երկրի արդի կացութեան դէմ և ներկայացնելու բարձր Դրան հայ ժողովրդի պահանջները։

Մենք բողոքում ենք այն սիստեմատիկ հալածանքների դէմ, որ կրում է մեր ժողովուրդը մանաւանդ վերջին տարիներում, հալածանք՝ որ Դուռը դարձրել է կառավարական սկզբունք և որի նպատակն է ոչնչացնել հայերին իրանց սեփական երկրի մէջ։

Մենք բողոքում ենք Սասունի կոտորածի դէմ, ուր մեր հաղարաւոր եղբայրներն ու քոյրերը իրենց կեանքի, գոյքի ու պատի ապահովութիւնը պահանջելու համար հրատարակել են իրը ապստամբներ և ենթարկուել են սրածութեան։

Մենք բողոքում ենք այն մշանջենաւոր զինուած յարձակումների դէմ, որ տեղի են ունենում իւրաքանչիւր օր քրդերի և թուրք կտտնաւոր զօրքերի կողմից և որոնց դէմ մեզ ոչ մի երաշխաւորութիւն չըտուին մինչև օրս, չը նայած այն բոլոր խոստումներին, որ տուել են մեզ Սասունի դէպքերից ի վեր։

Մենք պահանջում ենք Նորին Կայսերական Մեծութիւն Սուլթանից և Եւրոպայից այնպիսի օրինական կարգեր, որոնք երաշխաւորէին մեր կեանքի, գոյքի ու պատի ապահովութիւնը։

Մենք պահանջում ենք խօսքի, մամուլի, գումարումների ազատութիւն, պահանջում ենք բոլորի հաւասարութիւն օրէնքի առաջ։

Մենք պահանջում ենք քչացնել վարչական բաժանումները հայկական վեց վիլայէթներում՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սվազի Խարբերդի և Դիարբեկիրի։ Այդ քչացումը պիտի կատարուի ցեղագրական միապաղաղ բաժանումներով յիշեալ վիլայէթների մէջ։

Մենք պահանջում ենք այդ վեց վիլայէթների համար մի ընդհանուր կառավարիչ, որը պէտք է լինի եւրոպացի և նշանակուի պետութիւնների կողմից, սուլթանի համաձայնութեամբ։ Այդ պաշտօնեան պիտի կառավարէ երկիրը, Ն. Կ. Մ. Սուլթանի անունից, տեղական մի ժողովի աջակցութեամբ, առանց խորութեան ցեղի, կրօնի և հասարակական դիրքի։

Մենք պահանջում ենք ռէֆորմներ ոստիկանութեան ու ժանդարմերիայի կազմակերպման մէջ։ Պահանջում ենք տնտեսական ռէֆորմներ, հարկերի պակասեցում, կոռ ու բէգարի վերացում և այլն։

Մենք պահանջում ենք, որ քրդերի պարբերական քոչը արգելուի, համիդիէ հեծելազունդը արձակուի։

Մենք համոզուած ենք, որ մեր ձեւակերպած այս ցանկութիւնների իրագործումը անհրաժեշտ է նոյնքան հայերի ապահովութեան ու բարօրութեան համար, որքան և մեր երկրում բնակող միւս ժողովուրդների ու ամբողջ Օսմանեան կայսրութեան համար։

Անուասիկ մի այլ էպիզոդ։

1896 թ. օգոստոսի 14-ն է։

Դաշնակցականները գրաւել են Բանկ Օտտոմանը, Օսմանեան ֆինանսների այդ միջնարերդը։ Հսկայական հարստութիւնները հարիւրաւոր պաշտօնեաների հետ յայտնուում են վայրկենա-

բար «Դաշնակցութեան» ձեռքում և գոցուած բանկի պատուհաններից, որպէս մի անառիկ ամրոցից, տեղում է ռումբի տարափը շրջապատող զօրքի ու խուժանի վրայ։ Անօրինակ, շանթող մի հարուած։ Միաժամանակ ռումբային ճակատամարտ—Սամաթիայում։ Սարսափ ու իրարանցում թէ Եղբզի մէջ և թէ գիւանագիտական շրջանակներում։ Դիպլոմատները Եղբզի կողմից շտապով մտնում են հայ յեղափոխականների հետ բանակցութեան մէջ։

Ահա Դաշնակցութեան Պօլսի Կենտրոնական Կոմիտէի ազդարարութիւնը, որ տպագրուած էր հայերէն, ֆրանսերէն ու թիւրքերէն և որ ժամանակին հրատարակուեց եւրոպական բոլոր խոշոր օրգանների մէջ.

Մենք անգամ բողոքեցինք Եւրոպային թիւրք բռնապետութեան դէմ, բայց մեր բողոքները, որ օրինական էին, սիստեմաբար մերժուեցան։

Սուլթան-Համիդ արիւնահեղ վրէժխնդրութեամբ պատասխանեց մեզ։

Եւրոպան տեսաւ այդ ահռելի ոճիրը և լռեց։

Ոչ միայն դահճի ձեռքը չըրոնեց, այլ և մեզ լիտիբար համակերպութեան հարկադրեց։

Մեզ նախատեցին՝ մեր մարդկային իրաւունքը զլանալով մեզ, և մեր ազգային պատիւը ցմահ խոցեցին, մեր արեան մէջ մեր բողոքի ձայնը խեղդել ջանալով։

Մեր արիւնով սրբազործուած մեր պահանջներուն կուգայ հիմա միանալու և սրբազան վրէժի սեռուն դաղափարը, որ ուրուականի պէս արձանացած է մեր աչքերուն առջև։

«Իրաւունքը զօրաւորին է,» ասաւ մեզի Եւրոպան՝ իր մահաբեր անտարբերութեամբ, և մենք ակարներս մարդկային իրաւունքներէ զրկուածներս, հարկադրուած ենք զիտութեան դիմելու՝ որոնելով ամեն միջոց, փշրելու համար սուլթանի դարշելի լուծը, ալ չենք կրնար հանդուրժել։

Դիւանագիտական խաղերու ժամանակն ալ անցած է։

Մեր հարիւր-հազար նահատակներուն թափած արիւնը մեզի իրաւունք կուտայ ազատութիւն պահանջելու։

Մեր թշնամիներուն տարածած բոլոր նենգամիտ զրոյցներուն հակառակ մենք ինդրած ենք և հիմա ալ կը խնդրենք միմիայն անհրաժեշտը, այսինքն՝

1. Նշանակել ծագումով և ազգայնութեամբ եւրոպացի բարձրագոյն կոմիսար մը՝ Հայաստանի համար, ընտրուած վեց մեծ տէրութիւններու կողմէն։

2. Վալիները, միւթէսարիֆները և գայմմէգամները պիտի նշանակէ բարձր կոմիսարը և Սուլթանը պիտի վաւերացնէ։

3. Եւրոպացի սպաներու հրամանատարութեան ներքև պիտի կազմակերպուի տեղական ազգերէն միլիցիա, ժանդարմա և ոստիկանութիւն։

4. Դատական բարենորոգումներ՝ եւրոպական սիստեմով։

5. Կրօնի, կրթութեան և մամուլի կատարեալ ազատութիւն։

6. Երկրի հասոյթներու երեք քառորդ մասը պիտի յատկացուի տեղական պէտքերուն։

7. Յետնեալ հարկերը չընջել։

8. Հինգ տարի հարկէ ազատել, և հետեւեալ հինգ տարիներու պետութեան վճարելիք հարկը գործածել վերջին խռովութեանց պատճառած վնասները փոխարինելու։

9. Հայերէն գրաւած անշարժ կալքերը անմիջապէս վերադարձնել տէրերուն։

10. Բոլոր հայ գաղթականներուն ազատ վերադարձ։

11. Ընդհանուր ներում հայ քաղաքական յանցաւորներուն։

12. Եւրոպական տէրութիւններու ներկայացուցիչներէն առժամեայ յանձնաժողով մը կազմել, որ Հայաստանի գլխաւոր քաղաքներէն մէկուն մէջ հաստատուելով պիտի հսկէ վերոյիշեալ յօդուածներու գործադրութեան։

Ահա և հայ յեղափոխականները իրենց պահանջներով։ Որտե՞ղ է մնում հայկական թագաւորութեան առասպելը, որ հայատեաց Սուլթաններն և նրանց կապկող եւրոպական ծախու մտաւորները տարիներից ի վեր կրկնում են ու կրկնում։

Այդքան չափաւոր պահանջների գոնէ կէսը, կէսի կէսը իրագործուէր հայկական գժոխքում։ Բայց նրանք միշտ հնչեցին, իբրև անապատում բարդառող ձայներ։

Եւ սակայն, այո, հայ մարտիկը երբէք չըվհատեց։ Հ. Յ. Դաշնակցութիւնը, պատմական սոսկալի հարուածներից յետոյ ևս յետ չընահանջեց, այլ առաջ տարաւ իր ծանր խաչը առնական անձնուրացութեամբ ու վերջնական յաղթանակի գիտակցութեամբ։ Նա չէր ընկճուում, նա չէր յուսահատուում նոյն իսկ դիւանագիտութեան վերաբերմամբ։ «Քաղաքական պայմանները կարող են փոփոխուել»—մտածում էր նա։

«Ռուսաստանը դէմ է մեր հարցի գոհացուցիչ լուծման, և նա գլխաւոր, գերակշռող ֆակտօրն է. դէմ է և Գերմանիան, սուլթանի այժմեան հզօր բարեկամը, քանի դեռ նոր է սկսում ծաւալել գաղութային իր քաղաքականութիւնը Տաճկաստանում, քանի դեռ պէտք է զգում բծնելու, սիրաշահելու օսմանեան վեհապետին։ Բայց չէ՞ որ կան եւրոպական արէօպագի մէջ ուրիշ ֆակտօրներ, նոյնպէս շահագրգռուած տիրող կացութեամբ։ Չէ՞ որ կրէտէն, ապստամբ Կրէտէն իր ազատութիւնն ստացաւ, հակառակ Գերմանիայի ու Աւստրիայի ձեռնպահութեան և նոյնիսկ դիմադրութեան։ Չէ՞, մեր անբախտ Մայիսեան ծրագիրն էլ, որ հետեւանք է Սասնոյ առաջին ցնցման ու աւերման, առաջադրուած էր սուլթանին միմիայն երեք պետութիւնների կողմից, որոնք հետևապէս, իրաւունք ունէին և նրա գործադրութեան վրայ հսկելու...

Բոլոր վեց պետութիւնների համաձայնութիւնը անհրաժեշտ չէ՞ հայկական խնդրին ընթացք տալու համար, Հայաստանում տանելի պայմաններ ստեղծելու համար»։

Այդպէս էր մտածում հայ կուսակցութիւնը և նրա պրոպագանդիստ—ներկայացուցիչները Եւրոպայի մէջ վերջին տարիներում մէկ էական ձգտումն ունէին՝ միացնել երեք արևմտեան ռազմավար պետութիւններին տաճկահայկական դատի շուրջը։ Ապագան ցոյց կը տայ, թէ որքան այդ աշխատանքը նպատակայարմար ու արդասաւոր է։ Չը մոռանանք անխուսափելի բեգերվը։ Այդ աշխատանքի ներկայացուցիչները յոյս չունեն, թէ յիշեալ երեք պետութիւնների—Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի—վրայ յենելով՝ կարելի է հարցի շատ թէ քիչ արմատական լուծումն ստանալ։ Այդ վերջինը անկարելի է յայտնուում առանց Ռուսաստանի համաձայնութեան։ Սակայն, գժոխային կացութեան հանդէպ հայաստանցին շատ էլ պահանջկոտ չէ արմատական ռէֆորմների վերաբերմամբ։ Բերլինի դաշնագիրը և Մայիսեան ծրագիրը ինքն ըստ ինքեան պալլիատիվներ են, բայց նրանց շիտակ իրագործումը մեծ, կարևոր վաստակ կը լինէր կոտորածի մշտնջենաւոր կոշմարի տակ դեգերող ժողովրդի համար...

III

ՆՈՐ ՅՈՅՍԵՐ

Մայիսեան ծրագիրը.—Մեռած տառ.—«Գոշակ»-ի minimum—նախագիծը եւ Դելիկասսեն.—Ֆրանս.—բիւրեական ընդհարումը.—Հասարակական կարծիքը Ֆրանսիայում.—Գարձեալ յուսախաբութիւն.—Ռուսաստանի ձեռքը.—Սասունի ապստամբութիւնը.

—

Համեստ բան էր «Մայիսեան ծրագիրը»։ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, Սասունի առաջին մեծ կատաստրոֆից յետոյ, 1895-ին, փոխադարձ համաձայնութեան գալով, պահանջում էին Սուլթանից՝

1) Նշանակել «Հայկական վիլայէթների» թիւը։

Ռէֆորմները, ինչպէս յայտնի է, գահմանուած են վեց հետևեալ վիլայէթների համար. Էրզրում, Բիթլիսի, Վանի, Սեբաստիայի,

686-89

Խարբերդի, Դիարբեքիրի։ Պահանջում էր 18ο5-ի մայիսի եւրոպական միջամտութեամբ՝ վիլայէթական նոր բաժանում սահմանել այնպէս՝ որ այլազան ազգաբնակութիւնները համախմբուին ցեղագրական (էտնոգրաֆիական) միապաղաղ խմբումներով։

2) Նահանգապետների կամ վալիների ընտրութեան մասին Բ. Դուռը պարտաւոր է միշտ տեղեկացնել պետութիւններին։ Վերջիններս հարկաւոր ազդարարութիւնները պիտի անեն Բ. Դրան, եթէ ընտրուած վալիները ներկայացնեն այս կամ այն անպատեհութիւնը։

3) Թոյլ տալ բոլոր հայ գաղթականներին վերադառնալ հայրենիք և վերադաձնել նրանց յափշտակուած գոյքերը։

4) Ընդհանուր ներում հայ քաղաքական յանցաւորներին։

Եւ այլն և այլն։ Այդ գլխաւոր կէտերից զատ՝ կան շատ ուրիշ երկրորդական կէտեր ևս, նոյնպէս կարևոր ու կենսական։ Բայց ահա հարց. ո՞վ է գործադրում և ո՞վ է հսկում այդ ռէֆորմների գործադրութեան վրայ...

«Մի բարձր կոմիսար, ընտրուած Ն. Մ. Սուլթանի կողմից»— ահա մայիսեան ծրագրի պատասխանը։ Այդ բարձր կոմիսարը,— ի հարկէ, մահմեդական և հաւիդական—պիտի հսկէ, որ ռէֆորմներն իրագործուին արագութեամբ ու ճշտութեամբ [1])։

Մի ուրիշ կէտ՝ ռէֆորմների գործադրութեան վերաբերեալ՝ այսպէս է ձևակերպուած ծրագրի մէջ.

«Բ. Դուռը կը հաստատէ հսկողութեան մի մնայուն Յանձնաժողով, որ պիտի հսկէ ռէֆորմների ճշգրիտ կիրառութեան վրայ։ Այդ Յանձնաժողովին պիտի նախագահէ կայսրութեան մի բարձր պաշտօնեայ, բաղաքացիական կամ զինուորական։ Նա բաղկացած կը լինի վեց անդամից, ընտրուած կայսրութեան բարձր քաղաքացիական պաշտօնեաներից և հմուտ՝ վարչական, իրաւաբանական ու ֆինանսական գործերի մէջ։ Նրանցից երեքը՝ մահմեդական, միւս երեքը՝ քրիստոնեայ»...

Ահա այդ չարաբաստիկ ծրագիրը, իր էական գծերով։ Նա հրապարակ եկաւ, ինչպէս տեսանք, Սասունի առաջին կոտորածից յետոյ, բայց հայկական մեծ կոտորածներից առաջ։ Եթէ նա ժամանակին իրագործուէր, վերջիններս տեղի չէին ունենայ...

[1]) Այդ էական կէտին, քիչ յետոյ, Անգլիայի առաջարկութեամբ կցուեց մի յաւելուած.

«Բարձր կոմիսարը պիտի ընտրի Սուլթանի կողմից, բայց այդ ընտրութիւնը պիտի լինի պետութիւնների համաձայնութեամբ»։

Երկիրը այնուհետև դարձաւ արեան ու արհաւիրքների դաշտ... Մայիսեան ծրագիրը 90-ական թուականների վերջին՝ թուում էր արդէն հնացած, խղճուկ, անբաւարար։ Այդ հանգամանքն էր, որ դրդեց «Դրօշակի» խմբագրութեանը՝ նոր minimum—ծրագիր մշակելու և առաջադրելու պետութիւններին։ Վերջինը կազմուեց 1901 թուին, Մայիսեան ծրագրի հիման վրայ, կարևոր փոփոխութիւններով և Pro Armenia-ի խմբագրապետի միջոցով ներկայացուեց Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրին։

«Դրօշակի» խմբագրութեան առաջին մտահոգութիւնն էր, բնականաբար՝ հիմնական փոփոխութիւն մտցնել ռէֆորմների համար սահմանուելիք Գործադիր իշխանութեան կազմի մէջ։

1) Նշանակել (հայկական վիլայէթների վրայ) մի ընդհանուր կառավարիչ, եւրոպական որևէ ազգութեան պատկանող և հինգ տարեայ ժամանակամիջոցով։ Նա օժտուած կը լինի օրէնսդիր իշխանութեան բոլոր իրաւունքներով։ Նա կը հսկէ կարգի և հանրային ապահովութեան վրայ, կառնէ հարկերը, կը նշանակէ իր պատասխանատուութեամբ վարչական ագենտներին, կընտրէ դատաւորներին և գործադրել կը տայ նրանց վճիռները. առանձին հոգատարութեամբ կը նպաստէ խաղաղ աշխատանքի զարգացման և արդիւնաբերութեան ու երկրագործութեան կատարելագործման։ Նա կարող է հեռացուել միայն պետութիւնների համաձայնութեամբ։ Նա իրեն նիստ կունենայ՝ հայկական նահանգների կարևոր կենտրոններից մէկում։

2) Ընդհանուր կառավարչի մօտ կը սահմանուի մի ընդհանուր խորհուրդ—ժողով, ընտրուած հետևեալ եղանակով.

Իւրաքանչիւր կազա դուղարդէ երկու պատգամաւոր—մէկ մուսուլման, մէկ քրիստոնեայ—սանջակի մէջ, ուր կընտրուեն երկու խորհրդականներ, մէկ մուսուլման, մէկ քրիստոնեայ։ Այդ ընդհանուր Խորհուրդ-ժողովը կը գումարուի տարին մի անգամ. նրա պաշտօնը կը լինի՝ ուսումնասիրել հանրօգուտ աշխատանքի վերաբերեալ բոլոր խնդիրները, ինչպէս, օրինակ, հազորդակցութեան ուղիների զարգացում, վարչական դրամարկղների հիմնարկութիւն և այն բոլորը, ինչ որ կարող է նպաստել ժողովրդական լուսաւորութեան, երկրագործութեան, առևտրին ու արդիւնաբերութեան։

Այդ Խորհուրդ-ժողովը կը բաշխէ հարկերը և կը հսկէ ելմտի վարչութեան վրայ։ Նա կը կազմէ իր միջից մի մեծաւոր խորհուրդ-մարմին, որը կօգնէ ընդհանուր կառավարչին նիստերից յետոյ, սովորական ժամանակ։

Վեց վիլայէթների բիւջէն պէտք է սահմանէ Խորհուրդը՝ համաձայնութեամբ ընդհանուր կառավարչի հետ, հինգ տարի ժամանակով, եկամուտների միջին թւի համեմատ։ Եկամուտները նախ կը գործադրուին տեղական կարիքները գոհացնելու համար և աւելորդը կուղարկուի կենտրոնական կառավարութեան։

3) Պէտք է նշանակուի պետութիւնների կողմից մի մեծաւոր Եւրոպական յանձնաժողով՝ ռեֆորմները սահմանելու և նրանց գործադրութեան վրայ հսկելու համար։

Ահա «Դաշնակցական» մինիմում-ծրագրի էական կէտերը, որ 1901 թւի աշնան Pro Armenia»-ի խմբագրապետ Պիէռ Կիաոը ներկայացրեց մինիստր Դելկասսէին։ Եւ նա գտաւ շատ սիրալիր ընդունելութիւն։ Հետեւեալ օրը Պարիզեան մամուլը մի առանձին ուշադրութեամբ արձանագրեց իրողութիւնը։ Առաջին անգամն էր, որ դիպլոմատիան ընդունում էր մի յեղափոխական կուսակցութեան պատուիրակութիւն և ականջ էր դնում նրա իրական թելադրութիւններին։ Հեռագիրը իսկոյն լուր տարաւ դէպի ամեն կողմ, թէ «Դելկասսէն ընդունել է Դրօշակեան ծրագիրը»։

Եւ դարձեալ ուրախութիւն, դարձեալ յոյսի ճառագայթներ հայկական շրջաններում։ Ինչո՞ւ թագցնել—մենք էլ ուրախ էինք։ Զարթ օրեր էին, հաղագիւտ, յուսատու։ Ֆրանսիան բռնել էր Տաճկաստանի հետ և սպառնում էր պատերազմ։ Յարաբերութիւնները հասել էին բորբոքման գագաթնակէտին և ֆրանսիական նաւատորմը գնացել էր Միտիլէն։ Պարլամենտի մէջ՝ յուզմունք ու ցասում։ Հասարակական կարծիքը պահանջում էր կառավարութիւնից ամենախիստ ընթացք։ Բայց նա պահանջում էր՝ չը սահմանափակուել Տուրինների ու Լօրանդօների շահերը հոգալով։ Նա հրահանգում էր պատժել սուլթանական ամբարտաւանութիւնը՝ հայկական խնդրի լուծումը ևս պահանջելով։ Հայաստանը բոլորի շրթունքների վրայ էր. հարցապնդում՝ հարցապնդման վրայ։ Ելքերը դողում էր մերձեցող փոթորկից և հայոց սրտերը բարձրանում էին, բարախում։

Այո, զարթ ու կազդուրիչ վարկեաններ էին. և դարձեալ, մենք հայերս ոչինչ չը շահեցինք... Հայատեաց բռնակալութիւնը

այստեղ ևս միջամտեց, երկիւղ կրելով, մի գուցէ իրօք Ֆրանսիան խիզախէր հանդէս բերել 61-րդ յօդուածը և Մայիսեան ծրագիրը... Պետերբուրգի մահաշունչ կաբինետից հնչեց հրամանը և ցուցարար նաւատորմը հեռացաւ Միտիլէնից։ Ֆրանսիական բանկիրների յատուկ պահանջները իրագործուած էին արդէն, սուլթանը շտապել էր զիջել Դելկասսէին, հայկական հարցի ուրուականից վախեցած...

Ո՞վ գիտէ, գուցէ հէնց այդ զիջումը փութացնելու համար էր, որ մինիստր Դելկասսէն այնպէս սիրով ու դէմոնստրատիվ ընդունում էր այդ ընդհարման տագնապի միջոցին՝ և «Դրօշակեան» ծրագիրը և «Pro Armenia»-ի խմբագրին և Պարիզի հայ քահանային և պ. Մինաս Չերազին...

Այսպէս թէ այնպէս, երկու հզօր դաշնակիցները միաբանեցին, Ֆրանսիան ի դէմս իր կառավարութեան մի անգամ ևս դրժեց իր աւանդական հմայքը. հակառակ պարլամենտի ստիպողական պահանջներին՝ անտես առաւ Հայաստանի արիւնլայ ժողովրդին... Եւ իզուր, մի օր, այդ ողբալի միջադէպից յետոյ, պարլամենտի խոր լռութեան մէջ, մինիստրական խրոխտ ու անապարձ զեկուցման ժամանակ, ի զուր հայասէր-պատգամաւորների շարքերից արձակուում էր սրտամորմոք ու ցնցող բացականչութիւնը. Et l'Armenie? (իսկ Հայաստանը)...

* * *

Վրայ հասաւ Սասունի ապստամբութիւնը։ Դիւցազնական լեռնավայրը մի անգամ ևս ոռոգուեց իր հպարտ զաւակների արիւնով։ 15 հազար զօրք, լեռնային թնդանօթներով և 40 հազարի չափ քրդական աշիրէներ պաշարեցին ամեն կողմից։ Սկսողը թշնամին էր. նա չէր մարսում Սասունի կէս-անկախ գոյութիւնը. նա չէր տանում մանաւանդ ինքնապաշտպան ֆէդայիներին, որոնք բանակ էին դրել անառիկ բարձունքներում, «Դաշնակցութեան» հրամանատարութեան տակ։ Քանի՞ անգամ տաճիկը փորձ էր արել՝ կործանելու ըմբոստների այդ բոյնը, քանի՞ անգամ Սերոբի կռիւներից ի վեր նա ուղեցել էր զօրանոցներ կառուցանել Սասունում և նրանց միջոցով սանձահարել ապստամբ լեռնականներին—բայց և ամեն անգամ հանդիպել էր ինքնապաշտպան բանակի միահամուռ դիմադրութեան...

Այս անգամ, 1903-ին, աւագ, վճռական շտուրմն էր, հայկական միջնարերդի լինել-չը լինելու հարցն էր դրուած։ Եւ սկսեց մենա-

մարտը, ահեղ ու անհաւասար։ Մարտական սարսուռ անցաւ ամբողջ հայութեան ներվերով։ Առաջին անգամն էր, որ Մեծ-Հայաստանում մղւում էր ազատագրական այդպիսի մեծ ճակատամարտ։ Հայ ռազմիկները առիւծ էին կտրել, բայց ինչ անէին հսկայական բանակի դէմ։ Մի ամիս, ամիս ու կէս,—աւելի երկար չը պիտի դիմանային։ Ռազմամթերքը հատնում էր—ճակատագրական պատուհաս։ Անդրանիկը փամփուշտ էր գտնում, բայց արդէն ուշ էր... Վաղուց արդէն հնչում էր այդ պաղատագին կոչը, բայց հայ հասարակութիւնը քարացել էր. նա ժամանակին արձագանք չը տուեց կազմակերպութեան յորդորներին և Սասունը այժմ քաւում էր այդ անտարբերութեան ոճիրը...

IV

ԱՐԵԱՆ ՏԱՄՆԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ

Սասունի ապստամբութիւնը և եւրոպական հասարակական կարծիքը.—Անգլիան և միջամտութեան նախագիծը.—Վիժում.—Դարձեալ Ռուսաստանը.—Հայկական պարտութիւնը և նորին պատճառը.—Պարտիզանական կռիւներ։

Սասունը բռնկուած, ամբողջ երկիրը ալէկոծութեան մէջ։ Կռիւը բորբոքուել էր բոլոր կէտերում—Մշոյ դաշտից մինչև ռուսական և պարսկական սահմանագլուխը։ «Դաշնակցութեան» թուցիկ խմբերը գերմարդկային ճիգ էին թափում՝ օգնութեան հասնելու հոգեվարք լեռնավայրին։ Բայց ճանապարհը՝ ամենուրեք ցանած զինուորներով ու քրդական վոհմակներով։ Դէպի ամեն կողմ՝ զէնքի շաչիւն, թնդանօթի որոտում։ Հարկաւոր էր անսովոր վճռականութիւն ու խիզախութիւն՝ այդքան ահաւոր մի փորձութեան դիմադրաւելու համար—և այդ, գրեթէ միևնոյն ժամանակ, երբ Անդրկովկասը փոթորկուել էր եկեղեցական գոյքերի յափշտակութեան ուկազով, երբ «Դաշնակցութիւնը» գտնուում էր երկու ֆրոնտի վրայ կուելու սոսկալի անհրաժեշտութեան մէջ...

Եւ այնուամենայնիւ, հայ մարտական կազմակերպութիւնը պատմութեան անողոք դատաստանի առաջ մեղապարտ չը մնաց. նա չը լքեց և ոչ մէկը ժողովրդի նուիրական դատերից, նա արեց, ինչ որ կարող էր անել, նա թափեց անբաւ եռանդ՝ ինքնապաշտպանութեան գործը ուժեղացնելու համար, նա տուեց իր ուժերի մաքսիմումը, որ, անշուշտ, չնչին բան՝ էր հսկայական կարիքի հետ համեմատած...: Ո՞վ էր սակայն մեղաւոր...

Բայց իր սահմանափակ միջոցներով անգամ «Դաշնակցութիւնը» կարողացաւ պատուով դիմաւորել անցքերին. նա ստեղծեց Տաճկահայաստանում կանոնաւոր պատերազմական կազմութիւն, նա շարժման մէջ դրեց տաճկական ամբողջ չորրորդ զօրաբանակը և քրդական բոլոր աշիրէթները, նա ճանաչեց պատերազմական կոչմ։ Մեր ֆէդայու հոչակը տարածուել էր կայսրութեան ամենախուլ անկիւններում և մեր ամենաբիրտ թշնամիներին անգամ նա ներշնչում էր երկիւղ ու պատկառանք։ Դեռ Սասունի կռիւներից առաջ՝ Բասենի մեծ ընդհարումն էր սարսափ ազդել մահմեդական խուժանին ու զօրքին։ Այնտեղ, 150 հոգուց բաղկացած ֆէդայիների բանակը կռուի էր բռնուել կանոնաւոր զօրքերի ու հազարաւոր խուժանի հետ, թողնելով կռուի դաշտում 500-ի չափ թշնամի դիակներ։ Անգլիական Կապոյտ գիրքը յարգանքով ու հիացմունքով է յիշատակում այդ կռուի մէջ ցոյց տուած՝ հայ ֆէդայու արիութիւնն ու անձնուիրութիւնը...

Եւ ինչ...

Արիւնը վտակներով հոսում է Սասունի կիրճերում, եւրոպական հիւպատոսները տեղեկագրում են անցքերը իրենց դեսպաններին ու մինիստրներին. «Դաշնակցութեան» ներկայացուցիչները Եւրոպայում՝ տենդային եռանդով մղում են պրօպագանդը, անում են դիմումներ, անել են տալիս կորովի հարցապնդումներ պատգամաւորական ժողովներում. մեր անզուգական Պրէսանսէն, այդ մարմնացած ալտրուիզմը, արտասանում է ֆրանսիական պարլամենտի խոր, պատկառոտ ուշադրութեան մէջ՝ մէկը իր կլասսիկ ճառերից, ուր փառաբանում է հայկական դիւցազներգութիւնն ու նրա փայլուն հերոսներին, և իր հմայիչ պատճառաբանութեամբ, տաճկական իրականութեան ներհուն, բազմակողմանի ծանօթութեամբ, ծափահարութիւնների որոտ է յարուցանում ամբողջ պարլամենտում և ներբողալի կոմպլիմենտներ թոյնում նոյնիսկ ոլիմպիական Դելկասսէի բերանից... Մամուլը բարձրաձայն աղաղակում էր, որ չի կարելի թոյլ տալ նոր մարդկային սպանդանոցներ նոյն Սասունում, որի ցնցող մարտիրոսագրութիւնը տաս տարուց ի վեր զրաղեցնում է քաղաքակիրթ աշխարհի հասարակական կարծիքը։

Եւ ինչ... Մինիստրական խոստումներ ու դիմումներ, «ազդարարութիւններ» Կ. Պոլսում, «ազդարարութիւններ» վալիների մօտ, իսկ վճռական քայլ—երբեք։ Դիւանագիտութիւնը, կարայ թէ ակամայ, անտարբեր հանդիսատես եղաւ Սասունի լեռներում խաղացող ողբերգութեան, նա շարունակեց իր պարապ, անոյժ ազդարարութիւնները, մինչև որ հայ արծիւները, մի քանի յաղթական կռիւներից յետոյ՝ սկսեցին իրենց ճակատագրական ու արհաւրալի նահանջը...

Եւ դարձեալ ով էր մեծագոյն յանցաւորը այդ ոճրագործ յապաղումների մէջ.—ռուսական դիւանագիտութիւնն էր, հայ ժողովրդի մահացու թշնամին։ Անգլիան, ըստ առաջնոյն, միայնակ միջամտելու տրամադիր չէր։ Ֆրանսիան էլ, չը նայած Դէլկասսէի սկզբում բռնած կորովի ընթացքին, որևէ լուրջ քայլ անել չը կարողացաւ կամ չուզեցաւ, առանց իր դաշնակցի։ Անգլիայի ներկայացուցիչները, մինիստրից սկսած մինչև փոխ-հիւպատոսները, ցոյց են տալիս—ինչպէս այդ տեսնում ենք «Կապոյտ գրքի« վկայութիւններից—բաւական եռանդ ու փութկոտութիւն՝ հայ ժողովրդի այդ ծանր ճգնաժամին։ Ահա ինչ՝ Զինովիեվ, Պոլսի ռուսական դեսպանը, միշտ երևում է կրաւորական դիրքում և, դժբախտաբար, ուղղում է Ֆրանսիայի ներկայացուցչի վրայ։

Մայիսի 11-ին (1904), երբ արդէն շատ բան անցել-դարձել էր, Զինովիեվ յայտնում է, ի պատասխան անգլիական դեսպանի դիմումներին Սասունի անցքերի առթիւ, որ հրահանգել է ռուսաց հիւպատոսին՝ միաբանել անգլիական հիւպատոսի հետ... Իսկ ռուսաց հիւպատոսը, դեսպանի ասելով, դեռ նոր էր ճանապարհել Թիֆլիսից դէպի Բիթլիս...

Ուշադրութեան արժանի է, որ անգլիական դեսպանը մինչև իսկ հայ ապստամբների հետ բանակցելու որոշ ծրագիր էր կազմել։ Վերին աստիճանի հետաքրքրական է մայիսի 12-ի նրա հեռագիրը, ուղղած Բիթլիսի անգլիական փոխ-հիւպատոսին. ահա այդ հեռագրի պատճէնը, որ քաղում ենք պաշտօնական «Blue Book»-ից.

Հրահանգուած է Վանի ֆրանսիական հիւպատոսին՝ իր դեսպանի կողմից գնալ անմիջապէս Մուշ և խորհրդակցել ռուսաց հիւպատոսի ու ձեզ հետ՝ արդիւնաւոր միջնորդութեան հաւանութիւնների մասին։ Ուստի խնդրում են անմիջապէս գործի դիմել։

«Աւելացնում եմ—ձեզ իրազեկ դարձնելու և ղեկավարելու

համար—մի տեղեկութիւն՝ թէ ինչպէս են վարուել հիւպատոսները Զէյթունում, իրենց միջնորդութեան ժամանակ [1])։

«Հիւպատոսները բաւականաչափ զինուորների հետ մօտեցել էին ապստամբների բանակին, կանչել էին պարագլուխներին և հաղորդել էին նրանց թիւրքերի առաջարկած անձնատուութեան պայմանները։ Եւ երբ այդ պայմաններն ընդունել են, փոքրիկ փոփոխութիւններով, այն ժամանակ հիւպատոսները իրենց կամաներով շրջապատել էին ապստամբների պարագլուխներին և առաջնորդել էին նրանց դէպի ծով, ուր նաւ են նստեցրել դէպի Եւրոպա։ Պայմաններն էին՝ քրիստոնեաների համար կեանքի ապահովութեան երաշխաւորութիւն, ժամանակական հարկանների զինաթափում, ամնիստիա (ներում), պատերազմական զէնքերի յանձնումն, մի քանի տարով հարկահանութեան դադարեցում և այլն»։

Ուշացաւ հիւպատոսական միջնորդութեան այդ ծրագիրը... Ռուսաց հիւպատոսը, որը ճանապարհել էր Թիֆլիսից, «գալիս էր» ու չէր գալիս։ Անգլիական, ֆրանսիական հիւպատոսները Բիթլիսում սպասեցին, սպասեցին... Իսկ մինչ այս, մինչ այն՝ վայրենի հորդաները տակն ու վրայ արին Սասունը, խորտակեցին հայկական դիմադրութեան վերջին հերոսական ճիգերը...

—

Այդպէս ահա վերջացաւ հայ-ժողովրդական էպոպէի այն անմոռանալի դրւագը, որի անունն է Սասունի ապստամբութիւն։ Մի ուժեղ կազմակերպութիւն պէտք չի զգում թագցնելու իր փայլուն գործերի հետ և իր փայլուն ձախորդութիւնները... 1904 թուականը ամենազարթ և միանգամայն ամենամռայլ թուականներից է հայ ազատագրութեան պատմութեան մէջ։ Նա թուականն էր սանձարձակ խանդավառութեան և դառն, անողորմ յուսախաբութեան։ Տարիների ընթացքում հասարակական կարծիք պատրաստեցինք Եւրոպայում, տարիներ շարունակ զարկեցինք ահակոչնակը,—և վճռական, տագնապալի ժամին, երբ Հայաստանը վառուել էր յեղափոխական հրդեհով, երբ պիտի հնձէինք արդէն մեր աշխատանքի պտուղները՝ Եւրոպան վերստին մատնեց մեզ տաճկական եաթաղանին, Սասունը, յայտնի իր աշխարհասասան ողբերգութեամբ, տեսաւ իր տասնամեայ արեան յօբելեանը...

Մի անդամ ևս, և գուցէ աւելի ըէլիեֆ, աւելի ցայտուն կերպով

[1]) Խօսքը Զէյթունի վերջին, 1896 թի ապստամբութեան մասին է։
Մ. Ց.

այդ ծանր թեականը վեր հանեց ռուսական դիւանագիտութեան դժոխային էութիւնը, որ այդ վերջին ողբերգութեան մէջ ևս յայտնուում է ամենամեծ պատասխանատուն։ Մի անգամ ևս հաժամարդկային խղճմտանքը անարգ սիւնին մեխեց այն «չարաշուք ոգին», որ քան և հինգ տարուց ի վեր հալածում է մեզ իր թունաւոր ատելութեամբ, խանգարելով, դիմադրելով ամեն անգամ մեր արիւնոտ հարցի լուծման։

«Պատասխանատուութիւնները» բարդ են, ի հարկէ, ամեն մի պետութիւն ունի յանցանքի իր բաժինը, և միմիայն նրանք չեն մեղաւոր։ Հայկական անաջողութիւնները ունեցել են միշտ և ներքին պատճառ—այն պաթոլոգիական անզգայութիւնը, որ ցոյց է տուել մեր ունեւոր հասարակութիւնը (ոչ ժողովուրդը) դէպի արիւնակիցների անվերջ ու սրտաճմլիկ հաւարը... Եթէ նա ժամանակին պարտաճանաչ գտնուէր, չը գլանար իր աջակցութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան՝ Սասունը, տարակոյս չը կայ, աւելի երկար կը դիմադրէր և ապստամբութիւնը ուրիշ վախճան կունենար... Կապոյտ գրքի վկայութիւնները բացայայտ են դրա նկատմամբ։ Սասունի ապստամբութիւնը իր ողբերգական եւեւէջներով ու հերոսական պարտութեամբ՝ մշանջենաւոր մի մեղադրական է մեր անօրինակ անտարբերութեան դէմ և թւում է, թէ Վահանների ու Հրայրների հողակոյտ-գերեզմաններից դեռ հնչում է սասանեցուցիչ անէծքը հայ բուրժուազիայի հասցէին,—անէծք, որ երբէք, լքման ու յուսահատութեան գերագոյն ժամին՝ այդ հերոս-նահատակները հնչեցնում էին Տալորիկի բարձունքներից...

Պատմական չարիք... Այսօր ևս—նոյն դաւաճան անզգայութիւնը կովկասահայի տագնապի հանդէպ... Տեսէք, թէ ինչպէս դրամի իշխանները ամուր դարբնում են իրենց անդուկները կամ փախչում են հազարաւոր մղոններ հեռու և ամեն տեղ խուլ-համր են ձևանում քար ու քանդ գիւղերի ու քաղաքների, ժողովրդական ծով թշուառութեան ու ինքնապաշտպանութեան աղաղակների դիմաց... Այդպէս էր և Թիւրքաց Հայաստանի աշխարհաղողորդ սարսափների ընթացքում։ Գերմանական պաստօրները և շվեյցարական խանութպանները թերևս աւելի կարեկցութիւն ցոյց տուին դէպի Կարմիր Սուլթանի զոհերը և իրենց լումաներով աւելի ամոքեցին նրանց խեղճութիւնը, քան հարիւրաւոր միլիոնների տէր՝ հայ բուրժուազիան... Ո՞ր ազգի մէջ է դրամի կուլտը այդքան այլանդակ չափեր ընդունել և ո՞վ է մեղաւոր, որ

անձնուրացների բանակը դիմում է երբեմն յուսահատական միջոցների՝ փշրելու համար բուրժուական անտարբերութեան այդ ապառաժը, լրացնելու համար ինքնապաշտպանութեան հրամայողական կարիքը, օգնելու համար թշուառ, մորթուող հարազատներին... Մինչև երբ այդպէս... սարսափելի է մտածել։ Անցնենք։

Կռիւը շարունակուեց։ Սասունը, այո, մենակ չը մնաց իր ցնցումներով, մենակ, արիւնլայ և անարձագանք, ինչպէս 1894 ին թեականին։ Հայկական դիմադրութիւնը, բարբարոսաբար ճնշուած բարձր լեռներում, շարունակուեց, պարտիզանական կռիւների ձևով, դաշտերի վրայ և հեռագիրներն անընդհատ ծանուցին հերոսական մամուլին արիւնահեղ ճակատամարտներ Ֆէդայիների ու զօրքի միջև՝ մերթ Էրզրումի, մերթ Բիթլիսի ու Վանի վիլայէթներում։ Մայիսի սկզբներին Աշոտ Երկաթն էր իր խմբով ընդհարուում քրդերի հետ, Արճէշի մօտ, Խոջալուի ձորակում. ռումբերի տարափից շշմած փախչում է թշնամին, թողնելով 50-ից աւելի դիակներ։ Յունիսի մէջ Կայծակի ձիաւոր խումբը է կռուում Ջիվինի աւերակներում, 4000-ից աւելի զօրքերի ու քրդերի դէմ. մի կատաղի կռիւ, որ խլում է մեր կողմից 25 քաջեր, իսկ թշնամու շարքերից մի քանի հարիւր։

Յուլիս ամսի մէջ Դաշնակցութեան արշաւախմբերը, թւով 102 հոգի, դրաւում են Ջորի ու Աղստևի զօրանոցները և ռումբերով ու զնդակներով սոսկալի ջարդ են տալիս տաճիկ պահակներին։ Ոտքի է կանգնում ամբողջ Ալաշկերտի թիւրք ու քիւրդ խումբը. հայ ապստամբները դիմադրում են նրանց ու զօրքերին, կոտորում են մօտ 400 հոգի, իրենցից զոհ տալով 27 մարդ միայն։

Գրեթէ միաժամանակ, մի այլ արշաւախումբ, 61 հոգուց բաղկացած, Որսորդի ու Թորդոմի առաջնորդութեամբ, կռիւ է բռնում տաճիկ զօրքերի հետ Օլթիի շրջանում, ոչ հեռու ռուսական սահմանագլխից, և այդտեղ... խաղացնում է մէկը այն զարհուրելի ողբերգութիւններից, որոնցով ռուս-բիւրօկրատական անհոգի վայրագութիւնը պէտք է յաւերժանայ պատմութեան մէջ.—ռուսաց սահմանապահ զօրքը, գնդապետ Բրկովի ղեկավարութեամբ, օգնում թեան է հասնում նեղն ընկած տաճիկներին, կոտորում է հաապստամբներին, չը նայած սրանց ձեռնպահութեան ու կրկնակի յորդորներին, ապա մերկացնում է, ջարդում, այլանդակում նահատակներին և թիւրքերի հետ գրկախառնուած, օրդիաներ է

սարքում դիակների շուրջը... Երբէք, երբէք հայ ժողովուրդը չի մոռանայ լանկթամուրական այդ սարսռեցուցիչ գազանութիւնները, երբէք նրա անարգած, արիւնոտած սիրտը այնքան գարշանք, այնքան ատելութիւն չէր զգացել դէպի քրիստոնեայ «համիդիա-կանները», որոնք իրենց հրեշութիւններով մահմեդական քրդերից անգամ գերազանցեցին...

Ոչինչ չի կանգնեցնում հայ յեղափոխականներին, որոնք վրձռել էին coüte due coüte եւրոպական միջամտութիւն առաջ բերել... Ռազմական տենդը հասել էր չը տեսնուած սահմանների, գուցէ երբէք, հայկական բարձրավանդակը վկայ չէր եղել այնքան կազդուրիչ տեսարանների, այնքան արագութեամբ իրար յաջորդող բուռն, հերոսական ընդհարումների...

Բասենի, Սասունի, Զեյթունի, Բազրեւանդի կռիւներից յետոյ՝ ահա Բիթլիսի շրջանն է ասպարէզ դառնում արշաւախմբերի գործունէութեան։ Անդրանիկը, միշտ անհանգիստ, միշտ կռւի ծարաւ՝ իր մի բուռը կտրիճներով նեռւում է շարունակ այս ու այն վաշտի, զօրանոցի վրայ, մի օր նա յայտնւում է գաւառի մէջ, միւս օր ուղղակի բազմամարդ քաղաքի կենտրոնում—ինչ փոյթ, թէ քաջի գլուխը գնահատւած էր արդէն—շանթի պէս զարնում է և անհետանում, թողնելով թշնամուն շշմած ու ահարեկ։

Ահա Խանասորի Դումանն է երեւան գալիս Վասպուրականում իր ընտիր հեծելախմբով, կռւի է բռնւում մեծաքանակ քրդերի հետ և մի անգամ ևս աջողութեամբ դուրս է գալիս այն ծանօթ վայրերից, ուր նա շատ անգամ նեղն է ձգել արիւնարբու աշիրէթներին։

Ահա վերջապէս հայ յեղափոխականները բանակ դրած Վասպուրականի մայրաքաղաք—Վանում... Բարբիկաղները բարձրանում են, կռիւը տեւում է ամբողջ շաբաթ... Յարձակման տպաւորութիւնը այնքան ուժեղ է, որ Եւրոպայի հեռագրական գործակալութիւնները, չափազանցնելով, ծանուցանում են, թէ «Անդրանիկը գրաւել է Վանը, հիւպատոսները շտապում են այնտեղ, իշխանութիւնները իրարանցման մէջ են, զօրքերը գնացել են ազատելու քաղաքը»...

Զէնքը շառաչում է երկրի բոլոր անկիւններում, թիւրք վաշտերը մորեխի պէս լցնում են գիւղ ու քաղաքներ, դահիճը կատաղութեամբ վազում է իր որսի վրայ և մի անգամ ևս ապարդիւն փորձ է անում թնդանօթների ծխի մէջ խեղդել հայ-

կական շարժումը... Դիւանագիտութեան ներկայացուցիչները խնամքով արձանագրում են իրողութիւնները, միշտ աւելի և աւելի համոզւելով, որ չի կարելի կատակ անել մի շարժման հետ, որի արժանները այնքան խոր են և որ հայ մարտական կազմակերպութիւնը ընդունակ է աւելի ցնցող իրողութիւններով յիշեցնել Եւրոպային իր պարտաւորութիւնները...

V

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թոուցիկ ակնարկ հայկական հարցի պատմութեան վրայ.— Հայ շարժումը եւ մեր դիպլոմատիան «քաղաքագէտները».—Բերլին եւ Սան-Ստեֆանօ.—Կիպրոսի դաշնագիրը.—Լնգլիայի պատասխանատուութիւնը — Անգլօ-ռուսական հակամարտութիւն. — Պետրոս Մեծի կտակը.—Դէպի Պոլիս.—Ինչո՞ւ Ռուսաստանը փոխեց իր դիրքը.—Գերմանական և «ռեալական քաղաքականութիւնը».—

Եւրոպան... Պարտաւորութիւնները...

Մենք ծանրացանք գրեթէ բացառապէս Ռուսաստանի մեղսակցութեան վրայ, մենք ճանաչեցինք ռուսական դիւանագիտութիւնը, իբրև գլխաւոր պատասխանատու հայկական հարցի այնքան ողբերգական վախճանի համար, բայց կան, անշուշտ և ուրիշ մեղսակցութիւններ, պատասխանատուութիւններ։

Մի թոուցիկ պատմական ակնարկ թող աւելորդ չթւի ներկայ հակիրճ տեսութեան մէջ։

Այդ դժբախտ հարցին վիճակւած էր դառնալ մի տիեզերական անլուծելի կնճիռ, մի ճշմարիտ գորդեան հանգոյց։ Ճակատագիրը կանգնել էր նրա դէմ մի անարկու և անողոք կատաղութեամբ, պատմութիւնը, դիւանագիտական անօրինակ կոմբինացիաներն ու խաղերը դրել էին նրան սկզբից իվեր մի զարհուրելի կախարդական շրջագծի մէջ, ուսկից դուրս գալ անհնարին է լինում մինչև օրս էլ։

Ինչպէս որ աշխարհագրական և տեղագրական միջավայրն է խեղդել թիւրքահայ ժողովրդին, ինչպէս որ նախապատմական դիշատիչ ու բարբարոս հօրդաներն են գրոհ տւել շարունակ այդ ժողովրդի դէմ և պատնէշ կանգնել նրա ապստամբական ու ազատագրական ձիգերի առջև, նոյնպէս և քաղաքական հակամարտ շահերը, նոյնպէս և միջազգային դիւանագիտութեան ներքին յա-

բաձուն անտագոնիզմը սկզբից իվեր անլուր ու անյաղթելի խոչընդոտներ է դրել հարցի նպաստաւոր լուծման հանդէպ...

Սկզբից ի վե՞ր...

Ճակատագրին հաճելի եղաւ, որ 1878 թուին Սան-Ստեֆանոյի յայտնի դաշնագրի 16-րդ յօդուածը փոխարինուէր, մի քանի ամիս յետոյ, Բերլինի դաշնագրի 61-յօդուածով։ Տաճկահայաստանը այդ ակտով հանուում էր Ռուսաստանի խնամակալութիւնից և դրուում էր Եւրոպայի խնամակալութեան տակ...

Մեղադրականներ չենք ուզում արտասանել։ Մեր քաղաքական անձերի և նրանց քայլերի գնահատութիւն չենք ուզում անել։ Կը գայ ժամանակ, երբ հայ պատմագիրը ընդունակ կը լինի պաղ ու օրեկտիվ, ազատ ամեն տեսակ համակրանքներից ու հակակրանքներից, քննադատել մեր մօտիկ անցեալի իրողութիւնները և նրանց հեղինակ—դէմքերը։

Այսօր դեռ չը կայ այդ պատմագիրը։ Այսօր կիրքը և կուսակցական հակառակորդութիւնը այնքան հեշտութեամբ կուրացնում է մարդկանց և ստիպում նրանց՝ պաշտպանել բացարձակ անհեթեթութիւններ, ամենաարտուրդ դատողութիւններ։ Այսօր հայկական հրապարակը լցուել է թեթեւամիտ և դիլլետանտ քննադատներով, որոնք խլացնում են մեր ականջները անհնարին գոռում—գոչիւնով, դատափետում են և Վարժապետեաններին և բոլոր նրանց, որոնք այս կամ այն ձևով մասն են ունեցել հայկական հարցի ստեղծագործութեան մէջ։ Թոթովախօս քաղաքական մանուկներն անգամ, մի քանի լղարիկ բրոշիւրների հետ ծանօթանալուց յետոյ, օտար ու թոուցիկ գրականութեան մէջ մի քանի մակերեսային յօդուածիկներ կարդալուց յետոյ՝ հրապարակ են նետւում—և հրպիսի ապլոմբով ու համարձակութեամբ—«իրենց հեղինակաւոր խօսքն» ասելու, «իրենց կարծիքը» յայտնելու հայոց պատմութեան ամենափափուկ, ամենացաւոտ և ամենակնճռոտ խնդիրների մասին... Եւ մտրակում են, ամբաստանում են, ջարդում փշրում են հայկական շարժման ռահվիրաներին, գրչի մի հարուածով ոչնչացնում են կազմակերպութիւնները և քաղաքական տնտուութեան վկայական են տալիս նրանց շէֆերին։

Օ՜, այդ մանուկները իրանք թափանցել են դիւանագիտութեան խորախորհուրդ գաղտնիքների մէջ, իրանք, հարկաւ, այնպէս չէին վարւի 1878-ին և յետագայում, ինչպէս որ վարուեց

Ներսէս Վարժապետեան, ինչպէս վարուեցին Բաֆֆիները և նրանց հաւատարիմ կատակատար՝ յեղափոխական կոմիտէները... Ո՜չ, նրանք այլ կերպ կըվարուէին, նրանք կըմբռնէին հանճարի մի հուժկու փայլատակումով՝ քաղաքականութեան ու դիպլոմատիայի «ռեալ շահերը», և 80-ական թուերից արդէն կ՚ասէին ձեզ, թէ հայոց հարցը անլուծելի է, կ՚ասէին ձեզ, թէ ինչ պիտի լինէր 15 տարի յետոյ, այդ հարցի շուրջը, դիւանագիտական յարաբերութիւնների մէջ...

Մարգարէանալու, գուշակելու տենդը ինքն ըստ ինքեան գովելի է, ի հարկէ. միայն թէ յայտնի է, որ ամենահանճարեղ մարգարէութիւններն անգամ ոչ մի արժէք չունեն, երբ նրանք կատարւում են post factum, արդէն կատարուած իրողութիւնից յետոյ։

* * *

1878 թուին Բերլինի Կոնգրէսը առաւ Հայոց գատը Ռուսաստանի ձեռքից և յանձնեց Եւրոպական վեց խոշոր պետութիւններին։

Սան Ստեֆանոյի դաշնագիրը, կնքուած տաճիկ և ռուս կառավարութեան միջև, պատերազմից յետոյ, 1878 թ. մարտի 3-ին, յայտարարում էր.

—

Յօդ. XVI.—Որովհետև ռուս զօրքերի հեռանալը այն հողից, որ նա գրաւել է Հայաստանում, որ պէտք է վերադարձուի Թիւրքիային՝ կարող է տեղի տալ ընդհարումների ու բարդութիւնների, որոնք կարող են վնասակար լինել երկու երկրների լաւ յարաբերութիւնների պահպանման համար—Բարձր Դուռը պարտաւորւում է առանց ուշացնելու ի կատար ածել այն բարեփոխումներն ու ռեֆորմները, որ պահանջում են հայաբնակ գաւառների տեղական կարիքները, և երաշխաւորել նրանց ապահովութիւնը քրդերի ու չերքեզների դէմ։

Զորս ամիս յետոյ, 1878 թուի յուլիսին, Բերլինի համաեւրոպական Կոնգրէսը, որին թիւրքահայոց պատրիարքը Ներսէս Վարժապետեան ներկայացրել էր մի ժանրամասն դանդատ-ազերատիր հայ վիլայէթների յուսահատ կացութեան մասին—Բերլինի Կոնգրէսը փոխեց, Անգլիայի նախաձեռնութեամբ, Սան-Ստեֆանոյի դաշնագրի վերոյիշեալ կէտը և ընդունեց հետեւեալ բանաձևը.

Յօդ. LXI.—Բարձր Դուռը պարտաւորւում է, առանց յետաձգելու ի կատար ածել այն բարեփոխումներն ու ռեֆորմները, որ պահանջում են հայաբնակ գաւառների տեղական կարիքները և երաշխաւորել նրանց ապահովութիւնը չերքեզների ու քրդերի դէմ։ Այդ նպատակի համար ձեռք առած միջոցների

մասին Բ. Դուռը պարբերաբար կը տեղեկացնէ Պետութիւններին, որոնք կը հսկեն նրանց գործադրութեան վրայ։

Այդպիսով Եւրոպան, վեց պետութիւնները, հանդիսաւոր կերպով իրենց հովանաւորութեան տակ են առնում դարաւոր սարուկ հայաստանցուն։

Ազատագրութեան արշալոյս էր թուում դժբախտ, նահատակ ժողովրդի համար այդ նշանաւոր քաղաքական ակտը—և հասկանալի է այն բուռն ոգևորութիւնը, այն անսահման ու անխառն բերկրանքը, որով համակուած էր պատրիարք Վարժապետեան իր հռչակաւոր և աւետարեր Կոչի մէջ, ուղղած թիւրքահայ ժողովրդին...

Ոգևորութիւնն, աւաղ, կարճատև եղաւ, շուտով հետևեց ամենադառն, ամենաաղեխարշ հիասթափութիւն... 61-րդ յօդուածը և Եւրոպայի խոստացած կոնտրոլը մնացին պատրանք, կեղծիք, խաբէութիւն...

Այո, Անգլիայի ջանքերով էր, որ ձևակերպուեց Պետութիւնների այդ հաւաքական կոնտրոլը, Անգլիան էր, որ վախենալով մի գուցէ Հայաստանն էլ կուլ գնայ Մոսկովին, շտապեց հանել այդ երկիրը ռուսական հսկողութիւնից, և Անգլիան, անշուշտ, այդ օրերից ի վեր կրում է իր վրայ խիստ որոշ պատասխանատուութիւն։

Կայ մի ուրիշ հանգամանք, որ աւելի ևս ծանրացնում է անգլիական պատասխանատուութիւնը։ Կայ մի երրորդ դոկումենտ նոյն չարաբաստիկ հայկական խնդրի վերաբերեալ։ Դա Կիպրոսի դաշնագիրն է, որ կապուեց Անգլիայի ու Տաճկաստանի միջև, նոյն միջոցներում (1878-ի յուլիսի 4-ին)։ Այդ ժամանաւոր դաշնագրով Անգլիան պարտաւորուում էր պաշտպանել Թիւրքիայի ամբողջութիւնը «Մոսկովի» նոր արշաւանքներից և իբրև հատուցում՝ ստանում էր սուլթանից Կիպրոս կղզին ու միաժամանակ երաշխաւորութիւն՝ որ Տաճկահայաստանում ժողովրդին պահանջած ռեֆորմները... Տարիներն անցան, «երաշխաւորութիւնները» այնպէս էլ մնացին... Բոլոր յօդուածները, բոլոր հանդիսաւոր յանձնառութիւնները արհամարհուեցին սուլթանի կողմից և ոչ ոք չը հոգաց նրանց իրագործման մասին—ոչ իսկ նենգաւոր Ալբիոնը։

Լորդ Բիկոնսֆիլդ, Լորդ Սալսբիւրի՝ բրիտանական քաղաքականութեան այն ժամանակուայ վարիչները՝ սարսափած Ռուսաստանի նաւաճումներից, նրա արագ ու յաղթական յառաջխաղա-

ցութիւնից դէպի Պոլիս, որոշեցին, ինչ գնով էլ լինի, պատնէշ կանգնել այդ սպառնական արշաւանքի առաջ և մի տեսակ կուլտ, մի տեսակ քաքաքական զօրմա դարձրին Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը. նրանք որոշեցին այդպիսով պաշտպանել մի փտած, խարխուլ, ախտաւոր գոյութիւն, ի վնաս միլիոնաւոր հեծկլտացող հպատակների—և գործեցին պատմական անջնջելի մի սխիր...

Դերերը ժամանակի ընթացքում փոխեցին։ Ռուսաստանը, կիսալուսնի այդ աւանդական թշնամին, նա, որ ուզում էր ծաւալել ու կլլել սուլթանների երկիրը,—Ռուսաստանը, ով ճակատագրի քմահաճոյք, յետոյ դարձաւ ջերմ պաշտպան Տաճկաստանի ամբողջութեան։

Քաղաքական էւոլիւցիան բերեց նրան որոշ հրահանգներ։ Նա նպաստել էր բալկանեան մանր ազգերի ազատագրութեան, ոչ ի հարկէ իբրև անկեղծ, գաղափարական մի ազատարար—դա հակասում է բռնապետութեան ներքին բնութեան—այլ նա ազատել էր այդ մանր ազգերին՝ իր սեփական, շահադիտական նպատակներով։ Պետրոս Մեծի օրերից ի վեր, նրա հռչակաւոր կըտակի զօրութեամբ՝ ռուսական միապետութիւնը ձգտում էր միշտ, անդրդուելի յամառութեամբ դէպի իր մեծ ու փայփայած նպատակակէտը—դէպի Պոլի՜ս...

Տիրել սուլթանների մայրաքաղաքին, տիրել հին հռովմէական արևելեան աշխարհի սիրտ—կենտրոնին, նշանակում էր տիրել բարոյապէս ամբողջ արևելեան քրիստոնէութեան... Ֆրիդրիխ Լենգելս ճիշտ է նկատում «Ռուսական ցարիզմի արտաքին քաղաքականութիւնը» վերնագրով իր նշանաւոր յօդուածի մէջ, որ Ցարգրադը, Պոլիսը դիտուում էր Պետերբուրգից ու Մոսկուայից յետոյ, իբրև Ռուսաստանի երրորդ մայրաքաղաք, որ պիտի լինէր վրճռական էտապ, ուղղութեան՝ ամբողջ Եւրոպային տիրելու համար։ Դա կը լինէր միահեծան տիրապետութիւն Սև ծովի վրայ, Փոքր Ասիայի վրայ, Բալկանեան թերակղզու վրայ։

Պոլսին տիրելով, Ռուսաստանը կարող էր, ուզածին պէս, փակել Սև ծովը բոլոր ոչ-ռուս առևտրական ու պատերազմական նաւերի համար, դարձնել նրան ռուսաց պատերազմական մի նաւահանգիստ և մանեւրների մի ընդարձակ դաշտ ռուսական նաւատորմի համար, որը այդ ապահով պահեստի վայրից կարող էր աջող յարձակումներ գործել ամրացրած Բոսֆորի վրայով ևնորից

այդտեղ ապաստանել, ըստ ցանկութեան՝ արագ ու յաճախ 1)—1):

Եւ ահա այդ մեծ նպատակն իրագործելու համար, Նապոլէոնեան աշխարհակալութեան տենդով բռնուած ռուսական միապետութիւնը, Պետրոս Մեծի կտակի համաձայն, ծաւալեց անսովոր եռանդ, գործ դրեց անգուլ ճիգեր, ազատարարի ծիրանիով, բայց իրօք նուաճողի ախորժակներով՝ գնաց փրկելու օսմանեան լծից հաւակրօն սլաւոնները և ստեղծեց մանր սլաւոն պետութիւններ Բալկանեան թերակղզու վրայ:

Այդ պետութիւնները պէտք լինէին «Մոսկովի» հարազատ ու հաւատարիմ կլիէնտները, նրանք պէտք լինէին մի մի էտապներ մեծ ճանապարհի վրայ, դէպի մեծագոյն Նպատակը...

Յոյսերը, սակայն, չ'արդարացան: Նորակառոյց պետութիւնները, թէպէտ և հաճակատ երախտագիտութեան զգացումներով դէպի ազատիչը, բայց շատ շուտով զգաստացան, եղան խիստ ջերմ նախանձախնդիր իրենց անկախութեան և դիմադրեցին Ռուսաստանի շահախնդիր տենչանքներին: Այդ դիմադրութիւնը, գնալով, միշտ աւելի և աւելի սաստկացաւ:

Այդտեղից ահա և սկսւում է մի կատարեալ շրջումն ռուսական քաղաքականութեան մէջ: Hier ist der Hund begraben... Այդտեղ է պլբիւրը այն բոլոր դժոխային խաղերի, այն բոլոր քըստժնելի, աշխարհասասան ոճիրների, որ նիւթից ռուսական դիւանագիտութիւնը Փոքր-Ասիայում, պաղ, ստոյիկեան անտարբերութեամբ...

Այո, դերերը փոխուեցին: Ռուս կառավարութիւնը այլ ևս չուզեց ստեղծել իր սահմանների մօտ ինքնավար երկիրներ, նա վճռեց պաշտպանել Տաճկաստանի ամբողջութիւնը, սպասելով յարմար ժամանակի, երբ կըկարողանար նորէն սեղմել իր բռնաւոր թաթը և խլել սուլթանի կայսրութիւնից համեղ կտորներ, թէկուզ հէնց Տաճկահայաստանը: Այդ նպատակի համար նրան ձեռնտու էր պահպանել տաճկահայ գաւառներում մշտնջենական քաոս, մի յարատև անիշխանական վիճակ, որը կարող էր միշտ առիթ տալ «Մոսկովի» միջամտութեան...

Ռուսաց դիպլոմատիան դարձաւ սուլթանի «ջերմ» բարեկամը, աշխատեց գրաւել նրա վստահութիւնը, որպէսզի դիւրութեամբ կարողանար տարածել իր ազդեցութիւնը նրա լայնարձակ թագաւորութեան վրայ:

Սակայն, շուտով հրապարակ եկաւ մի ուրիշ ֆակտոր Բոսֆորի ափերում, որը մէկ հարուածով դուրս մղեց «Մոսկովին» Աբդիւլ Համիդի կասկածոտ սրտից և ինքը բռնեց նրա տեղը...

Վերջին տարիներս Ռուսաստանը համարեա բոլորովին չէր հետաքրքրւում Տաճկաստանով: Նա արդէն կարծես յոյսը կտրել էր և՛ Ցարգրադի նուաճումից և դէպի Հնդկաստան մի օր ուղղելիք իր արշաւանքի ծրագիրներից... Ճանապարհը խիստ տատասկոտ էր և Բրիտանեան, ծովերի թագուհին, կանգնած էր այնտեղ, Հնդկաստանի մէջ՝ հզօր, անպարտելի: Մնում էր ուրիշ ասպարէզներ փնտրել աշխարհակալական արկածների համար:

Եւ ահա Պետերբուրգը դարձրեց իր ուշադրութիւնը մերձաւոր Արևելքի թատերաբեմից և նայեց դէպի հեռու Արևելք... Այնտեղ կար լայնածաւալ Մանջուրիա, կար Չինաստան, որոնք աւելի հետաքրքրական էին, աւելի հրապուրիչ և ըստ երևոյթին աւելի «դիւրամարս»: Մենք տեսանք, թէ որպիսի դիւրութեամբ ժարսեցին այդ երկրները...

Այսպէս թէ այնպէս, Բոսֆորեան սթենոլորդից միշտ աւելի և աւելի հետ քաշուեց Թիւրքիայի երբեմնի զարգանդ-Ռուսաստանը: Այդ հանգամանքից մեծապէս օգուտ եղաւ Գերմանիան...

Մի նոր պատուհաս՝ դժբախտ, բազմատանջ Հայաստանի ժողովրդի համար... Գերմանիան եկաւ ռէալական ամենաբիրտ քաղաքականութեան դրօշակով և սկսեց ծծել Տաճկաստանի հարստութիւնները: Ինքը, յաւիտենական կոմմիվոյաժեօր Վիլհելմ կայսրը անձամբ գնաց սուլթանների երկիրը և իր պողպատեայ ձեռքով սեղմեց Եըլդըզի մենաւորի արիւնոտ ձեռքը: Նա շուտ շահեց Համիդի սիրտը, շուտ դուրս մղեց բոլոր ուրիշ մրցակից ուժերը և զիջումներ զիջումների հետևից ստանալով, տնտեսական հոյակապ ձեռնարկների ցանցով պատեց Տաճկաստանը:

Realpolitik! Բիսմարկի դաժան ոգին էր խօսում այդ զզուելի բառի մէջ, որի պաղ, ստոցային ծոցում շոգիանում են ժարդասիրութեան, ալտրուիզմի բոլոր զգացումները... «Ամբողջ Հայաստանը, ամբողջ Մակեդոնեան չ'արժեն անգամ մի Պոմերանեան գինուորի ոսկորին»...

Այդպէս էր ասել դաժան կանցլերը և այդ նշանաբանին մի-

անդամային հաւատարիմ մնաց գերմանական քաղաքականութիւնը Վիլհելմ II-ի օրով։ Գերմանիան ոչ միայն երբէք չը փորձեց պաշտպանել որևէ ճնշուած ժողովրդի դատը, ոչ միայն երբէք չուզեց յիշել Բերլինի դաշնագրով իր ստանձնած պարտաւորութիւնները, այլ և սատար ու աջակից եղաւ կարմիր սուլթանին՝ նրա ամբողջ քաղաքականութեան մէջ—Երէտական, Հայկական ու Մակեդոնական խնդիրներում։ Պօլսի ամենամեծ ջարդի միջոցին (1896 օգոստոս) արքայական ընծաներ էին փոխանակւում Բերլինի ու Եըլդըզի միջև... Իսկ երբ, սրանից չորս տարի առաջ, «դաշնակցական» մի խումբ ուսանողների յորդորներով, սոցիալ-դեմոկրատ Գրաղնաուէր, Ռայխստագի մէջ հարցապնդում արեց հայոց հարցի, Հայաստանի սարսափների և Գերմանիայի միջազգային պարտաւորութիւնների մասին,—Կանցլէր Բիւլով պատասխան անգամ չը տուեց, այլ բաւականացաւ մի կծու հեգնանքով... Մի մեծ, սահմանադրական, քաղաքակիրթ երկիր, որի արտաքին քաղաքականութիւնը՝ այնքան աղէտաբեր թիւրքահպատակ ժողովուրդների համար՝ չափւում ու ձևւում է Վիլհելմ--Բիւլովեան ձեռքերով և որի ամենաուժեղ կուսակցութիւնը, Սոցիալ-դեմոկրատեան ոչ մի ոյժ, ոչ մի ճնշում, ոչ մի ազդեցութիւն չի գործ դնում՝ այդ քաղաքականութեան արհաւիրքները դէթ փոքր ինչ մեղմելու համար։ Սոցիալ-դեմոկրատեան՝ 3 միլիոն ընտրողներով և 80 հոգի պատգամաւորներով Ռայխստագի մէջ՝ հանդիսանում է միջազգային քաղաքականութեան խնդիրներում... մի մեծ զրո. նա առհասարակ չի բողոքում (չեմ խօսում, ի հարկէ, Աֆրիկայի գերմանական գաղութների ընիկների մասին, որոնց դատի համար Բէբելները—իրաւամբ, անշուշտ,—հաղարաւոր նիզակներ են ջարդել Ռայխստագի մէջ)—տարիների փորձը հաստատել է մեզ, որ նա, գերմանական Սոցիալ-դեմոկրատիան դէպի արևելեան մորթոտող ազգերը չի ցոյց տուել նոյնիսկ այն minimum—կարեկցութիւնը, որ պէտք է պահանջել մի քաղաքակիրթ համայնքից։ Դառն է, բայց իրողութիւն։

* * *

Եւ շարունակւեց Հայաստանի մարտիրոսագրութիւնը։ Անբախտ ժողովուրդ... Ո՞վ կարող էր կարծել, թէ քո տարրական ապահովութեան հարցը այդ աստիճան պիտի խճճւէր, պիտի բարդանար, թէ քո պաշտօնական հովանաւորները այդքան անհաւատալի

ցածութեամբ, այդքան աղաղակող ցինիզմով պիտի դաւաճանէին իրենց տուած խօսքին...

Ռուսաստանը—թշնամի, Գերմանիան—թշնամի, Ֆրանսիան հակւած դէպի Ռուսաստանը, Աւստրիան հակւած դէպի Գերմանիան, Իտալիան էլ--չէզոք, Անգլիան մնում էր մեն մենակ... Հասարակական կարծիքի բուռն հոսանքից սթափւած՝ նա աչքերը լայն բաց արաւ, բայց արդէն ուշ էր։ Նրա ձայնը այլ ևս չէր լսւում Բոսֆորի ափերում, նրա բոլոր քայլերը հանդիպեցին Ռուսաստանի դիմադրութեան, նրա բոլոր նախաձեռնութիւնները խափանւեցին...

Եւ եղաւ այն, ինչ որ արդէն տեսանք։

VI

Զը յուսահատւի՞նք։

«Նորմալ» վիճակը—Ո՞ւր է եղը.—Ռուսահայաստանը և տանկահայ դաշը.—Հ. Յ. Դաշնակցութեան դիրքը.—Միջազգային խաղաքականութիւնը՝ փոփոխման ենթակայ.—Ռուսական յեղաշրջումը և դարձեալ նոր յոյսեր։

—

Փոթորիկն անցաւ, ուսզմի աղաղակները լռեցին վիթխարի ապանդանոցում, «ազատութիւն» մրմնջալով, ընկան մեր կորիւնները բուռն, յուսահատ և այնքան անհաւասար պայքարի մէջ, լքւած Եւրոպայից, լքւած իրայիններից։ Եւ գերեզմանային «խաղաղութիւնը» վերստին տիրեց Տաճկահայաստանում...

Վերականգնեց այսպէս անւանւած «նորմալ» դրութիւնը—«նորմալ»՝ որոշ դիպլոմատների և գուցէ նաև որոշ «ազգայինների» հեղինակաւոր տեսակէտով—մի դրութիւն, ուր իրաւ է, չը կան մեծ, մասսային ջարդ ու աւերումներ, բայց ուր ժողովուրդը հալւում է օրերով, ժամերով։

Դեռ երբէք բացառիկ օրէնքների ըէժիմը այնքան յարատև բռնութեամբ չէ իշխել ժարդկութեան որևէ հատւածի վրայ։ Դրակոնը իր հնադարեան առասպելական մոլեգնութեամբ՝ նսեմանում է Ելդըզ Քեօսկի կամարիլլայի առջև։

Որոնք են այդ «նորմալ» դրութեան սքանչելիքները։

Երթևեկութեան կաշկանդում։ Հայ տարրի ազատ հաղորդակցութեան դէմ հաղարաւոր արգելքներ են հանւում. փակւում են ճանապարհները թէ դէպի դուրս՝ արտասահման, և թէ դէպի ներս՝

գաւառից-գաւառ, քաղաքից-քաղաք, գիւղից-գիւղ։ Հետևանքն այն է, որ քաղաքներում խպառ կաշկանդւում է առևտրական կեանքը, ապրանքների արտադրութիւնն ու փոխանակութիւնը. իսկ գաւառներում յաճախ անհնարին է լինում օգնութեան հասնել՝ արհեստական սովից մեռնող հայ ընտանիքներին։

Հարկահանութիւն։ Ամենաահարկու խարազաններից մէկը այն դժբաղդ վայրերում։ Որքան յաճախ սուլթանական հարկահաւաքները դագանակով ու մահւան սպառնալիքներով ստիպում են հայ պրօլետարին ծախել իր վերջին, խղճուկ ստացւածքը, վճարելու համար իր բաժին հարկերը՝ այնքան բազմաթիւ, օրինաւոր ու ապօրինի, յետնեալ ու ներկայ։ Եւ այդ դեռ բոլորը չէ, դեռ կան քիւրդ աղաներ, ցեղապետներ ևս, որոնք իրենց յատուկ պահանջներն ունեն։

Բանտային մահացութիւն։ «Բացառիկ» ըէժիմը իշխում է նոյն իսկ բանտերում։ Հայ կալանաւորները պահւում են ահռելի խցիկների մէջ և ենթակայ են անօրինակ տանջանքների։ Թիւրք ու քիւրդ աւազակները, որոնց փակում են հայ քաղաքական յանցաւորների հետ, յաճախ լրացնում են բանտային կացութեան արհաւիրքը. չնչին առիթով նրանք պատրաստ են յարձակւել, կոտորել իրենց «գեաւուր» բաղդակիցներին։ Ոչ մի բանտային կեանք երկրագնդի վրայ չէ արտադրել այնպիսի ցնցող մարտիրոսագրութիւն, որպիսին բաժին է ընկել 20 տարուց ի վեր թիւրքահայ ժողովրդին։ Ոչ մի բանտային ըէժիմ չէ պատճառում այնքան զարհուրելի մահացութիւն, ինչպէս այդ տեսնում ենք Տաճկահայաստանում և ուրիշ հայաբնակ վայրերում։ Կապոյտ գիրքը արձանագրել է յաճախ այդ վայրերի ըէժիմի սոսկումները...

Ներդաղթում (immigration)։ Այն վայրերում, ուր հայ ազգաբնակութեան մէջ շատ թէ քիչ շեշտւում է ինքնապաշտպանութեան ընդդէմ, ուր դժւար է սովորական, վայրագ միջոցներով արմատախիլ անել «վտանգաւոր տարրը»,—այնտեղ հաստատւում են, պաշտօնական աջակցութեամբ՝ մահմեդական գաղթականներ, եկւորներ, չէրքեզ, լեզգի և այլն, որոնք դառնում են թշւառ ընիկների համար նոր պատուհաս, բռնի յափշտակում են նրանց հողերը, ստիպում են գաղթել...

Մասնակի սպանութիւններ։ Ի՞նչ կայ աւելի դիւրին, քան ամենօրեայ մասնակի սպանութիւնների քաղաքականութիւնը, որը դիմում է իր ոճրագործ նպատակին, առանց աղմուկ հանելու, դիւանագիտութեան ուշադրութիւնը հրաւիրելու։ Փաստեր չենք բերում. «Դրօշակի» վերջին տարիների համարները լի են ողբերգական պատահարների արձանագրութիւններով, որոնք պարզ վկայում են, որ կոտորածը իրօք քրօնիկական բնաւորութիւն ունի Թիւրքաց Հայաստանում։

Ո՞ւր է ելքը...

Մեր համառօտ տեսութիւնից մասամբ արդէն բղխում է այդ չարատանջ հարցի պատասխանը։ Հայ «պատմական փոքրամասնութեան» կռիւը օսմանեան բռնապետութեան դէմ՝ պէտք է շարունակւի, նա չի կարող կանգ առնել։ Յեղափոխական գործունէութիւնը, տաքտիկի կողմից, կարող է, անշուշտ, փոփոխութիւններ կրել և պէտք է կրէ, համաձայն տեղի ու ժամանակի պահանջներին։ Բայց նա ընդհատւել չի կարող, հէնց այն պարզ պատճառով, որ կիսանահատակ ժողովուրդը, չը նայած իր դրութեան բոլոր սարսափներին, արտադրելու է միշտ իր լաւագոյն դատի համար կռւող ու զոհւող երիտասարդութիւն,—այն երիտասարդութիւնը, որ ամենազգայուն, սրտոտ ու անձնուէր տարրն է ամէն տեղ, որ դժւարութեամբ է ճկում պարանոցը բռնաւորի առաջ, որ զօրավիգն է բոլոր ազնիւ ըմբոստացումների։

Ցաւի, տառապանքի ժխորի միջից լսւելու է միշտ խիզախ ու հուժկու բողոքի ձայնը, որ ձգտելու է միշտ կերպարանաւորւել, կազմակերպւել, որ կարօտելու է միշտ ինտելիգենտ և ազդագէտ ղեկավարների, նիւթական ու բարոյական գործօն աջակցութեան։

Ո՞ւր պիտի փնտրէ նա, թշւառ, անօգնական տաճկահայաստանցին, ո՞ւր պիտի փնտրէ նա այդ աջակցութիւնը, եթէ ոչ մեզ մօտ, իր արիւնակիցների աշխարհում։ Եւ ո՞վ է այն համարձակը, որ վստահանայ պնդել, թէ արիւնակցութիւնը այնքան էլ շօշափելի, այնքան էլ զօրաւոր մի ֆակտոր չէ մեր արիւնաներկ երկրագնդի վրայ, ո՞վ է այն խիզախը, որ քաջութիւն ունենայ յայտարարելու, թէ ռուսահայ ժողովուրդը կարող է դրժել իր 15 տարեայ պատմութիւնը, իր տւած հերոսների—Զաքարեանների և Կարօների, Պետ

հայերի կողմից չի եղել տաճկահայ շարժումների մէջ, նա չի նը-
կատուել նոյն իսկ Տաճկահայաստանում։ Բայց ո՞րտեղ է եղել նա.
ո՞ր ազգն է իր ազատագրական տագնապների ժամին հանդէս բե-
րել ընդհանուր, համատարած, մասսային շարժում...

Սակայն միւս կողմից՝ ո՞վ կարող է մոռանալ այն յուզիչ ու սըր-
տապնդող տեսարանները, մասսային ոգևորութեան այն անսովոր
արտայայտութիւնները, որոնց ականատես էինք մանաւանդ շարժ-
ման առաջին շրջանում. ո՞վ կը մոռանայ յաւէտ յիշատակելի այն
օրերը, երբ Կուկունեանի խմբի արշաւը Անդրկովկասի մի ծայ-
րից միւսը՝ նմանուում էր յաղթական թափօրի, երբ ժողովուրդը
արտասուքն աչքերին դիմաւորում էր հայ ազատագրութեան
առաջամարտիկներին, երբ Ալէքսանդրօպոլի ու Ղարսի յեռին
արհեստաւորը շտապում էր իր լուսան ձգել յեղափոխական դան-
ձարանի մէջ, երբ պառաւ մայրը իր միւս ու ճար զաւակին բե-
րում էր Կուկունեանին, խնդրելով նրան՝ «տանել Հայաստան» և
զոհաբերել հայրենիքի սեղանի առջև...

Ո՞վ է այն կոյրը, այն անգիտակից, թերուս դօքտրինեօրը,
որ մերժէ արիւնի եղբայրակցութեան այդ համատարած, տիեզե-
րական փաստը և փորձէ ամեն բան վերածել շահի գռեհիկ փի-
լիսոփայութեան, կամ լաւագոյն դէպքում՝ լոկ պլատոնական մար-
դասիրութեան... Հայութիւնը այնքան էլ հարուստ չէ հոգեկան
վսեմ արտայայտութիւններով,—ինչո՞ւ են ուզում նսեմացնել նրա
կեանքի ամենապայծառ էպիզոդները... Ո՞վ սիրտ կանէր ջնջել
համաշխարհային պատմութեան էջերից ցեղա-ազգայնական այն-
պիսի ուժեղ համակրութեան փաստեր, ինչպէս բօլգարների, յոյնե-
րի ու այլոց յարատև ճիգերն ու զոհողութիւնները՝ յօգուտ իրենց
տանջող ու պայքարող արիւնակիցների՝ Մակեդոնիայում, Կրե-
տէում...

—

Ռուսահայ և տաճկահայ պիտի թէ տան իրար, պիտի միա-
նան և՛ սև օրերում և՛ ուրախ, հանդիսաւոր ժամերին, և՛ տառա-
պանքի և՛ խանդավառութեան գրկում, նրանք պիտի լինեն իրա-
րու նեցուկ, պաշտպան, քաջալեր։ Այդ միութիւնը փորձանքնե-
րի մէջ, սրտերի այդ յուզիչ ներդաշնակութիւնը չէ՞ք տեսնում
արդեօք հէնց այսօրուան ռուսահայկական տագնապի միջոցին,
թուրք խուժանի գրոհի հանդէպ... Նայեցէք ձեր շուրջը...

Այս. «Դաշնակցութիւնը» և նրա հետ Անդրկովկասեան հայ

ժողովուրդը կը շարունակեն համարել թիւրքահայ խնդիրը իրենց
սեփական, հարազատ մի գատ։ Անցեալը, իրաւ է, մխիթարական
քիչ բան է տալիս այդ գատի լուծման տեսակէտից—և մենք չը
ղլացանք մեր տեսութեան մէջ շեշտելու այդ տխուր հանգամանքը,
մենք չուզեցինք շլացնել ընթերցողին պարապ, օպտիմիստ
յայտարարութիւններով—սակայն այդտեղից մինչև լքումն ու յու-
սահատութիւնը՝ դեռ շատ հեռու է։ Անցեալի արգելառիթ ֆակ-
տօրները ենթակայ են մշտական փոփոխման...

Սրանից 7-8 տարի առաջ մեծ, շառաչալի կոտորածներից
յետոյ, մեզ ասում էին, թէ ամեն բան վերջացած, է, հայ ժողո-
վուրդը ընկճուած է, ուժասպառ, հայ երիտասարդութիւնը խսպառ
հնձուած, հայ յեղափոխական հոսանքը ցամաքած... Բայց դրանից
յետոյ ըմբոստների բանակը ցոյց տուեց, անգամ իր սուղ միջոց-
ներով, որ կարելի է ամբողջ տարիներով Սասունը պահել ան-
կախ վիճակում և ամիսներով կռիւ մղել այնտեղ կանոնաւոր
զօրքի և տասնեակ հազարաւոր քրդերի դէմ,—մի կռիւ, որ պէտք է
վերջանար մասնակի յաղթանակով, եթէ Դաշնակցութեան տրա-
մադրութեան տակ դրուած լինէր աւելի դրամ ու ռազմամթերք։

Մեզ ասում էին Սասունի այդ ցաւագին պարտութիւնից
յետոյ ևս, թէ ամեն ինչ կորած է անդառնալի կերպով, բոլոր
յոյսերը՝ մարած,—և դարձեալ անմիտ երեմիականներ, դարձեալ
յոռետեսութեան աղաղակներ... Մեզ ասում էին և այն, որ բոլոր
չարիքների աղբիւր-պատճառը, բոլոր ոճիրների խորհրդանշան—
Կարմիր Գաղանը անմատչելի է իր որջի մէջ... Բայց նոյն յե-
ղափոխական փոքրամասնութիւնը,—ինչ ենք ասում—մի հատիկ
մարդ, մի հրաշագործ ձեռք մատչելի չարձրեց նրան... Նզովենք
ամարգ պատահարը, որ այդ ձեռքը այնպէս վաղաժամ անդամա-
լուծելով՝ ճակատագրական վիժման դատապարտեց վրիժառու
Գործը, որի աջողութեան հետ այնքան իրաւացի յոյսեր էին
կապուած...

—

Սպառուեց արդեօք ժողովրդի կորովը։ Ողբալ, խա՞չ դնել մեծ,
արիւնոտ, համաշխարհային գատի վրայ և թողնել այդ ժողովուրդը
հալ ու ժաշ լինել բարբարոսների ճիրաններում, սովի, եաթա-
ղանի ամենօրեայ հարուածների տակ։ Բայց դա կը լինէր աններե-
լի պարտադանցութիւն, դա կը լինէր դաւաճանութիւն, մանա-
ւանդ ներկայ խորհրդաւոր օրերում, երբ ազատարար մի հոգմ

անցնում ամբողջ աշխարհով. — Ռուսաստանը, հայկական հարցի լուծման այդ մեծագոյն խոչընդոտը, նորոգելու վրայ է, ռուս ժողովուրդը յեղափոխության շրջանի մէջ է և վաղը ամբողջ պետական կազմի հետ՝ արտաքին քաղաքականությունը ևս պիտի դրուի ժողովրդական ներկայացուցչության դատաստանի առջև. հիւսիսի կոլոսը, իր սեփական շահերից խսկ մղուած և պան-գերմանիզմի սրարշաւ առաջադիմության հանդէպ, Տաճկահայաստանում պիտի բռնէ անհրաժեշտաբար նոր, տարբեր ընթացք հայ դատի նկատմամբ... Միւս կողմից քաղաքակրթուած երկրներն էլ,—Ֆրանսիան, Անգլիան—տալիս են հետզհետէ իրենց ղեկը յուսալի, արմատական տարրերի ձեռքը, որոնք վաղը դժուար թէ լքեն մեզ իրենց նախորդների պէս... Միւս կողմից, վերջապէս, ահա սկսում է ցնցել ինքը թիւրք ժողովուրդը, սուլթանականության հզօրագոյն պատուարը... Մի քանի վայրեր արդէն թատր են լուրջ յուզումների, հակաբիւրոկրատական բուռն ցոյցերի... Տաճիկ մասսան գիտակցության է գալիս և դուցէ արդէն դառնապէս զղջում է, որ ժամանակին հայ յեղափոխականի կոչ ու յորդորներին արձագանքելու տեղ՝ այնպէս չարաչար դաւաճանեց նրան...

VII

Յեղափոխության մի արարած

Թիւրքիան խմորում է.—ուր ամիս առաջ և այսօր.—Իրարում և Կաստամունի.—Շախսի վերկիսի.—Արիւնահեղ բռնկում.—Յեղափոխության նախերգանքը։

Այո, խորհրդաւոր, պատմական օրեր... Ռուսական մեծ Յեղափոխությունը ունենում է իր անխուսափելի անդրադարձումները ամբողջ մահմեդական արևելքի վրայ։ Ժամանակը և հաժաշխարհային գոռ փոթորիկները իրենց գործն են տեսնում, մարտական լօզունգը հնչում է ամեն տեղ և անգամ դարերի խոր գիշերի մէջ նիրհող անշարժ մասսաները արձագանք են տալիս ռազմի կոչերին։

Ո՞վ կարող էր կարծել, թէ սրանից 7—8 ամիս առաջ բռնկուած շարժումները Էրզրումում, Կաստամունիում և Տաճկաստանի ուրիշ կէտերում նախերգանքն էին ուրիշ, աւելի ցնցող անցքերի... Եւ սակայն այսօր դա իրողություն է, այսօր մենք կարող ենք ասել վստահությամբ, որ Մեծ Մարդասպանի Կայսրությունը, հանդերձ «հաւատարիմ» Թիւրք հպատակներով, գտնուում է յեղափոխական

մի կատաղեալ խմորման մէջ... Իսկ Մարդասպանը ինքն ընկած է մահուան հանգրանի վրայ, դուցէ հոգեվարքում... Կարող էր նայ, Եըլդըզի այդ գոռոզ, արիւնարբու Ներոնը, երևակայել աւելի ցաւագին, աւելի արտասուելի մի վերջալոյս...

Եօթ-ութ ամիս սրանից առաջ Թիւրք ժողովրդային յուզումները, մանաւանդ Կարինում, գրաւեցին ընդհանուր ուշադրությունը։ Եըլդըզը ցնցուեց, ինչպէս մի ահեղ անակնկալով բռնուած... բնաւ չէր սպասում։ Բռնաւոր, աստուածպետական միապետությունը վաղուց ի վեր «մշակել էր» Մահմեդի երկրպագուների առանց այն էլ ինքնագիտակցությունը, վաղուց ի վեր քարոզել ու սովորեցրել էր մասսաներին, որ սուլթան-Խալիֆը Ալլահի երկրաւոր փոխանորդն է, սուրբ, ամենազօր, և որ նրա դէմ ըմբոստանալը անհանդուրժելի սրբապղծություն է։

Էլ ինչ բարեաւ դօգմաներ... Նրանք խորտակուեցին, օդը ցնդեցին... Մասսան, այնուամենայնիւ, ըմբոստացաւ, երբ կարիքը եկաւ սղմեց նրա կոկորդը։

Նոր տուրքեր էին սահմանուում, նոր բեռ էր տրուում ընդհանուր ազգաբնակության վրայ, առանց այն էլ ճնշուած, ուժասպառ։ Մուրացկան պետությունը դրամի պէտք ունէր։ Ջարդերի քաղաքականությունը և վամպիր-բիւրոկրատիան քամել էր, քամել երկրի հիւթերը. տասնեակ տարիների ընթացքում նա ուրիշ միջոց չի ունեցել պետական խարիսուլ, անդամալոյծ մեքենան պահպանելու համար, նա երբէք չի մտածել շինարար աշխատանքով բարձրացնել երկրի արդիւնագործությունը, ֆինանսական վիճակը, նա միշտ միայն ծանրացել ժողովրդի վրայ, օրինաւոր ու ապօրինի տուրքերով խեղդամահ է արել քրիստոնեական միլիոն ազգաբնակությունը...

Քամիներ է ցանել Համիդի ռեժիմը և այժմ սկսում է փոթորիկ հնձել... Նոր տուրքերը, «շախսի վերկիսի» (անձնական տուրք) անունով, լցրին դառնության ու համբերության բաժակը և դարաւոր սորուկը երերաց, ծառացաւ։ Կազմեցին խմբեր մահմեդականների մէջ, սկսեց բուռն ագիտացիա, վճռեցին տուրքը չը վճարել։ Էրզրումը շարժուեց։ Գործադուլ...

Ժողովրդական ակնաւոր դէմքերը—կղեր ու վաճառական—անցան շարժման գլուխ. խանութները փակուեցին։ Անցքերը արագ-արագ յաջորդեցին իրար։ Ժողովուրդը հեռացրեց վալիին

(նահանգապետին), պաշտօնական արաւ ոստիկանապետին իր երկու վատթար ոստիկաններով:

Եւ խաղաղութիւնը վերահաստատուեց, խանութները վերաբացուեցին:

Կը հանդուրժէր Եըլդըզի բռնաւորը այդքան յանդուգն հարուածներ... Պոլսից անմիջապէս քննիչ յանձնաժողով ղրկուեցաւ, որ և սկսեց «աշխատել»: Արտաքուստ, Եւրոպային նա յայտարարեց, թէ շարժման գրգիչներ եղել են հայերը... յաւիտենական քաւութեան նոխազը... Յայտնի էր, սակայն, որ հայ տարրը բնաւ չէր մասնակցել մահմեդականութեան այդ անդրանիկ շարժման: Կան նոյնիսկ նշաններ, որոնք կարծել են տալիս, թէ տաճիկները միանգամայն խուսափել են հայի մասնակցութիւնից, լաւ իմանալով կառավարութեան ապագայում բռնելիք դիրքը...

Իսկ ներքուստ սուլթանական քննիչ յանձնաժողովը մանրազննին ուսումնասիրում էր շարժման իսկական աղբիւրը, նրա հեղինակներին, պարագլուխներին: Եւ թունաւոր զեկուցումներ էին ճամբուում դէպի Պոլիս...

Շուտով Կարին է ուղարկուում նոր վալի և ընտրուում է նոր ոստիկանապետ: Սրանք էլ շարունակում են նախորդներին:

Անցնում են ամիսներ: «Շախսի վերկիսի-ի խնդիրը մեռած էր թուում: Բայց իրօք Եըլդըզը շարունակ նոր-նոր հնարքներ էր ժամանում՝ պատժելու խիզախ ըմբոստացողներին:

Վերջապէս, հարուածը տեղաց: Հեռագիր Ստամբուլից—բռնել գիշերանց շարժման առաջնորդներին և ղրկել մայրաքաղաք... Էրզրումը նորից խլրտաց, ասես ռումբ պայթեց: Նոր յուզումներ, արիւնհեղութիւն, արդէն կատարեալ ապստամբութիւն... Թողնենք, սակայն, որ ազատագրական շարժման այդ ուշագրաւ էպիզոդը պատմէ ինքը «Երկրի» թղթակիցը, իր անպաճոյճ ու ազդու լեզուով.

Կարին, 10 հոկտեմբեր, առաւօտուն կանուխ արթնանալիս գործադուլի լուրն ենք ստանում. տանը ամեն ոք, «խանութները գոցել են»—ասում են:

Օդն ամպամած է, գիշերն անձրև է եկել, գետինը թաց է, անձրևը շարունակում է կաթկթել:

Դուրս եմ ելնում, իրաւ է. գործադուլը նորէն սկսուել է, խուժանը խռնուել է «Կիւրճի Դափուսի»-ի զինուորական պահակա-

նոցի առջև. լռութիւն է տիրում, բայց զայրոյթը կարդացուում է թիւրքերի դէմքին. ամեն ինչ խորհրդաւոր է:

Իմանում եմ պատճառը: Գիշերը Պոլիս են աքսորել նախորդ գործադուլի վարիչներից մի քանիսին, որոնց մէջ է եղել նաև Մուֆթին: Զարաչար են վարուել նրանց հետ, ընտանիքներից, անկողիններից են հանել նրանց՝ յանկարծ, առանց նախապէս լուր տալու:

Մի թիւրք պատմում է. «Սէր-քօմիսէր, Ալայի պէյ և փոլիսներ անարգել են Մուֆթին, նրա բերանը թաշկինակ են կոխել, որ ձայն չը հանէ, շրթները մեքենայի մէջ են դրել. նրա աղջկանը վիրաւորել են, կնոջ մազերից բռնել և փողոցի ցեխերի մէջ են շպրտել և վերջապէս մերկ մերկ կառքը նստեցրել և աքսորել են: Բայց ազատակից ժողովուրդը խռնուել է և երբ ուզել են սի չորրորդն էլ իր տանից դուրս բերել, սա կրակում է, մի զապթիյէ սպանում և ամբոխն այդ կողմ է վազում. ձերբակալողներ տեղի են տալիս, իսկ ամբոխն իր ժարդերն է ուզում. նրան յաջողւում է հէնց քաղաքի փողոցներում հասնել մի կառքի ետևից, կտրել կառքի կաշիները և ազատել մի աքսորեալը, իսկ Մուֆթին և ուրիշ երկու էլ առանձին սրընթաց կառքերով հեռացրել են:

Ամբոխն անհամբեր սպասում է. տեսնում եմ դադաշների մի խումբ՝ որ փողոցներում պտտում է. հասկանում եմ, որ կոմիտէի անդամներին ֆիստի են հրաւիրում:

Նիսաը կատարում է գաղտնի և որոշումները կայացնում են այսպէս. պէտք է շուտով բանտարկել նահանգապետը և ստիպել, որ աքսորեալներն յետ բերէ, սպանել Ալայի պէյ, Սէր-քօմիսէր և այն փոլիսները, որոնք Մուֆթին չարչարել են, արշալուսին խուժանի վրայ ատրճանակ են արձակել, երեք հոգի վիրաւորել և մի զինուոր սխալմամբ սպանել են:

Ամբոխի մասսան մեծանում է. պահականոցը պաշտպանելու համար զինուորների մի նոր խումբ է գալիս. երկու կողմից էլ ոչինչ շարժում չէ նկատուում: Երկինքը հետզհետէ պարզուում է: Խուժանը մի սպասում ունի սակայն, նա գիտէ, որ իր փնտռածները պահականոցն են ապաստանել. բայց զինուորները թողնելու են որ իրանք կատարեն կոմիտէի որոշումները:

Փորձել հարկ է. ասացին և ներս խուժել սկսեցին. զօրքը մի թեթև դիմադրութիւնից յետոյ ճամբայ բացաւ:

Ահա Սէր-քօմիսէրը, դադաշները նրա թևերից բռնած դուրս

են բերում. մի թիկնեղ մարդ է դա. ճերմակ կարճ մօւրուքով. նա չէ էլ սպասում, որ իր կացութիւնն այնչափ ծանր լինի. պիտի անարգեն, ծեծեն, մատծում է թերևս, բայց ահա դարբնի սալի գործողութիւնը, հաստ փայտերն ելնում իջնում են:

Նա ընկաւ անշունչ և գետինը ներկեցաւ արիւնով: Ամբոխը ծափահարում է, ուրախութեան աղաղակներ են լսւում: Կոմիտէի անդամներից մէկը խուզարկում է նրա գրպանները և հանում է մի ցուցակ. դա աքսորեալների ցուցակն է. 60 անձի անուններ գրուած են ցուցակում: Ամբոխը հայհոյում է:

Կարճ ժամանակից յետոյ դաղաշները հեռանալ սկսեցին, հեռանում եմ նրանց և կանգ առնում նահանգապետի տան առջև: Հոս էլ մեծ ամբոխ. զօրքը շրջապատել է նահանգապետի տունը դաղաշները նորից վարանում են, բայց նորից փորձել հարկ է և ահա ձեռնարկեցին, ներս խուժել են ուզում:

Հրացանաձգութիւնն սկսւեց մէկ—երկու... տաս քսան, ուֆ, դժուար է կացութիւնս. զինուորներն են կրակում. ամբոխը յետ է մղւում, բայց ահա նորից ոյժ առաւ նա և վրայ է յարձակում, զինուորների շարքը ճեղքւեցաւ և ես լսում եմ, որ մի զօրք ասում է. «ինչու՞ փախչում էք, հո մենք ձեր վրայ չենք կրակում, չէ՞ք տեսնում, մեր գնդակներն օդն են ելնում»:

Դաղաշները շէնքից ներս են մտել ահա դուրսից տան ապակիներն են ջարդում. նահանգապետը, յանկարծակիի եկած, հարեւն է փախչում և գաղտնի դռնից մի ուրիշ տուն է մտնում: Ամբոխը աղաղակում է. «գաչտը՞, գաչտը՞», Յաղթական բոպէ է, զօրքն անտարբեր դիտում է, ահա դաղաշները քոնեցին նահանգապետը, անարգում են նրան, ապտակում են, գլխից արիւն է վազում:

Յաղթական թափօր է կազմւում, նահանգապետը մօտակայ մզկիթն են առաջնորդում. ես մեկնելը խոհեմութիւն եմ համարում: Վարը պահականոցին առջև ամբոխը նորից կեցել է հանդարտ և լռին:

Որոշումները գործադրելու են, այո, և ականատեսները պատմում են. «եկէս օրւան մօտիկ ամբոխը նորէն պահականոցից ներս է խուժում, Սէր-քօմիսէրի աղան՝ երկրորդ քօմիսէր թաքստոցից դուրս է բերում շէնքի բալքոնի վրայ և նորից սկսւում է դարբինի գործը: Ամբոխն ուզում է, որ վար շպրտեն մարմինը, խընդրանքը կատարւում է և ամբոխը յօշոտում է տղու մարմինն էլ և երկու դիակները քով քովի է դնում»:

Ժողովուրդը դայրացել է, Ալայի պէյն է ուզում, բայց չէ գըտնում. նա լաւ պահուրտել է: Ահա տանիքների վրայ էլ մարդիկ են ելել, փնտրում են հա փնտրում. ահա նորից որս, բայց Ալայի պէյ չէ, մի փօլիս է դա. նորից զանակոծում է նորից գետինը ներկւում է արիւնով:

Փողոցներում հանդարտութիւն է տիրում, ժողովրդական փօլիսները ձիերով ման են գալիս և դիտում են շուրջը. ժողովուրդը վստահ է, որ անկիւնները ոչինչ անկարգութիւն չէ լինելու:

Մի զարմանալի երևոյթ է սա. երկու անգամ է, որ գործադուլ է լինում, բայց ոչ մի անախորժ դէպք չէ պատահում ժողովրդի մէջ. հայերն և Թուրքերը միմեանց հրաշալի հանդուրժում են:

Գնում եմ տեսնելու բանտարկեալ նահանգապետին. մզկիթի մի անկիւնը, գլուխը փաթաթած ծալապատիկ նստել է նա. դաղաշները դուրսից ասում են. «վալի փաշա, եթէ աքսորեալները մինչև երեկոյ չը գան, քեզ էլ Սէր-քօմիսէրի պէս սատկեցնելու ենք»: Խեղճը դողում էր... Նա արդէն հեռագրով /ր հրա անը յետ էր առել:

Իրիկնապահին լուր է հասնում, որ աքսորեալները պիտի դառնան. պատմում են, որ կոմիտէի կողմից ղրկւած ձիաւորները ճամբան միացել են լազերի հետ, Աշ Գա էի մօտեր մի կռիւ են մղել պահապան զափթիյանների դէմ, երկու կողմերըն է վիրաւորներ են ընկնում և վերջը լազերի քաջութիւնն յաղթանակում է:

Իրիկուն լուսնեակ է. ամեն ոք դէպի քաղաքի դուռն է գնում. ես էլ գնում եմ և ահա մի քիչ սպասումից յետոյ յաղթական թափօր է կազմւում և աքսորեալները լոյսերով, կեցցէներով քաղաք են մտնում:

Միւֆթին ուրախ է, ժպտում է. օրհնում է ամենքին, դաղաշներին և ալ մոռացել է, որ 18 ժամ առաջ իր շրթները մեքենայի մէջ էին դրել և ինքը կառքում մերկ դողում էր:

Միւֆթիին տուն են առաջնորդում. վիրաւոր աղջիկն ուրախանում է: Նահանգապետն ազատ արձակում են և նրա հարէմը մի խանում է: Նահանգապետն դառնալիս նահանգապետին ասում են «գնա, քիչ հանգստանում է: Արձակելիս նահանգապետին ասում են «գնա, մի անգամ էլ այսպէս մի վարուիր, էլ քեզ հետ գործ չունենք»:

Մութ գիշեր է, մտածում եմ: Անշուշտ պատմութիւն մը մեծ դեր համարելու է սա. հարկաւ վերջը լաւ լինելու է. դժուարն սկսելն էր. ալ տարակոյս չը կայ, որ ամբոխն էլ կարճ ժամանակից յետոյ կրկնելու է Թուրք գրագէտի խօսքը:

«Եէր է կէչեն խեթիպտան».—Թող գեռին անցնի բռնապետութիւն։

«Բէշո օլսուն Համիդ».—Թող կուրանայ Համիդ։

Եալասու հուրրիյեէթ.—Կեցցէ՛ ազատութիւն...

VIII

Այսօր եւ վաղը

Սուլթանի մեծալուս վախճանը.—Ի՞նչ կը լինի յետոյ.—Երկու կենդանիներ եւրոպ. դիպլոմատիայի առաջ.—Աւստրիա եւ Տանկասան.—Թիւրք բռնապետութեան հուրիւնը.—Անքուժելի անուխիսան.—Կենդրոնախոյս ձգտումներ եւ ոչ մի նշոյլ միջազգայնութեան.—Հայ-մահմեդական համերաշխութիւն.—«Նոր մեքոբը».—Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ երիտասարդ Թիւրքիան.—Վաղուան սուլթանը եւ թիւրքիատական փորձ մեխանիզմը.—Not mesures, but men!.—Ինքնավարութի՞ւն, թէ անկամահատում.—Ֆեդերացիայի գաղափարը։

Աբդիւլ Համիդը մեռնում է...

Այդպէս են վկայում գերմանական և ֆրանսիական աղբիւրներից բղխող ամենաիրազեկ հաղորդագրութիւնները։ Հիւանդութիւնը ամիսների հարց է։

Այն մարդը, որ 1878 թուականից ի վեր, ամբողջ 28 տարի շարունակ պահել է իր ձեռքում Օսմանեան լայնածաւալ ու բազմատարը կայսրութեան դէկը, և որ այնքան յուժգնօրէն, այնքան որոշակի դրել է այդ դեկավարութեան վրայ իր սուբեկտիվ, անհատական դրոշմը,—այդ մարդը այսօր ընկած է, վերջապէս մահուան հանգրւանի վրայ։

Վաթսուն սուլ չորս տարեայ կեանք, որի զրեթէ կէսը—մի կատարեալ դժոխք... Միշտ հալածող և միշտ հալածական։ Մանուանարդ մանգաղը երբէք չընկաւ նրա ոսկրացած ձեռքերից և նա ինքն իրան երբէք ազատ չը զգաց սև, մահաբեր ուրուականներից մտացածին ու իրական իր դժոխային շրջապատում։ Մշանջենական կասկածներ, հոգեհիւանդի զառանցանքներ ու ցնցումներ, խելագարի բառանչիւն ու մռնչիւններ, վրիժառութեան ահարկու թափեր, յաւիտենական մեքենայութիւններ՝ իր շուրջը վխտացող երևակայական ոսոխների դէմ, մի սոսկալի, հալածողական մանիա...

Եւ զարձեալ անասելի երկարակեցութիւն։ Դիւրին բան չէ

64 տարին բոլորել այդպիսի հրէշաւոր պայմաններում։ Աւելացրէք և արևելեան դեսպոտներին յատուկ կենցաղը, հարեմական կաղմալուծող մթնոլորտը և այլն։

Վերջալոյս... Քանի՞ քանիներն են անձկութեամբ սպասել այդ կաղդուրիչ վերջալոյսին... Եթէ յեղափոխական Նէմէզիդան իր դիւային հանճարով, իր անօրինակ հնարագիտութեամբ չը կարողացաւ փութացնել ժամը այդ վաղուց սպասուած վերջալոյսի—փոյթ չէ, թող ընութիւնը ինքը արշաւէ մի յանցաւոր գոյութեան դէմ, որի խղճի վրայ կուտակուած են այնքան ոճիրներ, որի անունը նողկանք է շարժում ամբողջ քաղաքակիրթ աշխարհի մէջ... Միայն թէ շուտ, միայն թէ ընութեան այդ բաղձալի հարուածը տեղայ շեշտակի, անողոք, սպանիչ։ Քանի՞ շրթունքներ են մրմնջում այդպէս...

Ժողովուրդների ռամկական տրամաբանութիւնը Աբդիւլ Համիդի անձի մէջ է տեսնում բոլոր պատուհասների աղբիւր-պատճառը։ Եւ երևակայում է, թէ նրա չքանալով, արդարութիւնն ու խաղաղութիւնը պէտք է թագաւորեն։ Հին, տարածուած նախապաշարմունք։ Ճշմարտութեան բաժին կայ, անշուշտ։ Վեհապետները, մանաւանդ նրանք, որոնք ակտիվ մասնակցութիւն են առնում պետական կենսոտ մեխանիզմը վարելու գործում, իրենց անհատական այս կամ այն յատկութեամբ անդրադառնում են երկրի կառավարութեան վրայ, նրա դրական և բացասական հետևանքների վրայ։

Եւս առաւել այդ միտքը ճիշտ է Աբդիւլ-Համիդի անձնաւորութեան նկատմամբ։

Շատ քչերն են աշխարհիս վեհապետներից այնքան տենդով, այնքան կատաղի շահախնդրութեամբ միջամտել—և այն՝ ամեն օր, ամեն վայրկեան—պետական գործերին և այնքան թափով հաղորդել են մինիստրական ամեն տեսակ կարգադրութիւններին իրենց անձնական համակրանքն ու հակակրանքը։

Եւ, այնուամենայնիւ, չի կարելի ասել, թէ Աբդիւլ-Համիդը միակ ճնշող ու միահեծան տէրն է իր ընդարձակ կայսրութեան, թէ նա Լուդովիկոս XIV-ի պէս ամբողջ պետութեան անձնաւորումն էր (L'Etat, c' est moi!) և թէ նրա մահով, ուրիշ վեհապետ գահակալելով՝ դրութիւնը հիմնապէս կը փոխուի։

Որքան բազմաթիւ, մանր ու խոշոր Համիդներ կան այդ տարաբախտ միջավայրում—աշիրէթապետներ, վալիներ, փաշաներ

ու գայմագամներ—որոնց միաբան ու արիւնռուշտ գործակցութեամբ առաջ եկաւ տիեզերական սասանեցուցիչ դրամներից մէկը...

Ի՞նչ է սպասում վաղը Տաճկաստանին։

IX

Երկու խոշոր ու ցաւոտ պրոբլեմներ են դրուած այսօր միջազգային դիւանագիտութեան առջև։ Աւստրիայի եւ Տաճկաստանի վաղուան հաւանական վիճակի խնդիրներն են դրանք։

Երկու պետութիւններ—երկուսն էլ կազմուած բազմայեղ, բազմակրօն և այլաբարբառ ժողովուրդներից, երկուսն էլ հարուստ՝ կենտրօնախոյս ձգտումներով և պայթուցիկ նիւթերով։ Երկու վեհապետներ—երկուսն էլ զառամեալ, մերձիմահ։ Մէկը, Ֆրանց-Եօզէֆ, կարողացել է մինչև օրս սանձահարել այդ կենտրօնախոյս ձգտումները, շնորհիւ մասամբ իր անձնական ժողովրդականութեան։ Միւսը՝ Աբդիւլ-Համիդ՝ պահպանել է իր կայսրութեան թոյլ ու խախուտ ամբողջութիւնը, շնորհիւ միմիայն պետութիւնների մրցակցութեան, նրանց շահերի հակամարտութեան։

Եւ երկու պետութիւնների ճակատագիրն էլ ժամիկ ապագայում թւում է չափազանց առեղծուածային։

Անորոշութեան քօղով պատած է մանաւանդ վաղուան Տաճկաստանը...

Ի՞նչ կը լինի արդեօք Աբդիւլ-Համիդի մահից յետոյ, ինչ փոփոխութիւն կարող է մտնել տաճկահպատակ ազգերի կեանքում։

Ինչ փոփոխութիւն...

Արդէն ինքնին մի շատ խոշոր փոփոխութիւն կը լինի սուլթան-մարդասպանի չքացումը։ Մի քիչ արդէն ազատ կը շնչեն այդ բազմատանջ ժողովուրդները, որոնց վրայ տասնեակ տարիներից ի վեր կապարի պէս ծանրացած է այդ թագակիր-ոճրագործի լուծը։ Յոյսի, մխիթարութեան մի հզօր ճառագայթ կանցնի մշտական սպանդանոցների, արեան ու աւերածի երկրի վրայից։

Ով որ էլ լինի յաջորդ գահակալը, նա չի կարող լինել Աբդիւլ-Համիդ, չի կարող հեռանել թալանի և սպանութեան նրա քաղաքականութեան։ Դա կը լինի մի հոգեբանական և սոցիալական անկարելիութիւն։ Ով որ էլ լինի յաջորդ սուլթանը՝ չի կարող խոյս տալ ժամանակի հրամայողական պահանջներից, չի

կարող չը ձգտել փոքր ի շատէ եւրոպականացնելու ասիական բարբարոսութեան բէժիմը, վերջ տալու սիստեմատիկ բնաջնջման մեթոդին, հաստատելու մի տանելի իրաւակարգ, դուրս բերելու երկիրը դէպի խաղաղ ու նորմալ զարգացման ճանապարհը։

Դա մի «կատէգորիկ իմպերատիվ» կը լինի վաղուան խալիֆի համար, մի վճռական հրամայական։

Այո, բայց ինչպէ՞ս կիրագործէ նա, ինչպէ՞ս նա կը ժոցնէ նոր, եւրոպականացնող հոսանք, ինչպէ՞ս նա կը խղէ այն փթած, ժանգոտած պետական մեխանիզմի հետ, որ Թիւրքիայի ամենաէական ատրիբուտն է եղել, նրա տիրապետող յատկանիշը։

Կը կարողանա՞յ վաղուան սուլթանը առանց դրսի միջամտութեան, իր սեփական նախաձեռնութեամբ սկսել Թիւրքիայում մի նոր դարագլուխ—ռէֆօրմների, եւրոպականացման, քաղաքական վերակազմութեան դարագլուխը։

Եւ հնարաւո՞ր է արդեօք պահպանել օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը, առանց զարնուելու անյաղթելի խոչընդոտների, առանց վտանգելու այլազան տարրերի նորմալ, բնականոն առաջադիմութիւնը։ Ահա կնճռոտ, ցաւատանջ հարցեր, որոնք ցցած են ժամանակակից դիւանագիտութեան առջև։

Աւստրիան շատ աւելի բարեյաջող կացութեան մէջ է։ Ճիշտ է, այնտեղ ևս դեռ շատ ուժեղ են կենտրօնախոյս ձգտումները, ազգային մրցումն ու թշնամութիւնը, որ, անտարակոյս, գուշակել է տալիս ծանր բոպէներ մերձաւոր ապագայի համար, երբ այլևս չի լինի բոլորին կապող, միաւորող օղակը, Ֆրանց Եօզէֆը...

Բայց դրա հետ միասին կայ մի բարերախտ, նպաստաւոր գործօն, կայ աւստրիական մէկ միացեալ, սոցիալիստական կուսակցութիւնը, որը կապում է ֆէդերատիւ, դաշնակցական կապերով բոլոր այլազան ազգութիւններին—գերմանացոց և չեխերին, բուսինների և լեհերին, բումէնների և հրէաների և այլն—մէկ, միացեալ ու միջազգային կուսակցութեան մէջ, որ չի ճանաչում ազգայնական որևէ առանձնաշնորհում ու գերիշխանութիւն, որ հիմնուած է բոլոր ազգերի աշխատաւոր դասակարգերի, նրանց շահերի միութեան, ներդաշնակութեան վրայ, մի կուսակցութիւն, որ ունի արդէն իր ներկայացուցչութիւնը կենտրօնական օրէնսդիր հաստատութեան մէջ, Պարլամենտում, և որը բաւականաչափ ուժեղ լինելով, իր թւով ու որակով, իր տրամադրելի մասսաներով՝

սկսում է արդէն գործ դնել իր ազդեցութիւնը պետութեան ներքին քաղաքականութեան վրայ։

Նա ունի իր յատակ ազգայնական ծրագիրը, նա այժմից արդէն նախագծում է վաղուան Աւստրիան իր խայտաբղէտ տարրերով, իբրև ֆէդերատիւ, դաշնակցական և անբաժանելի մի մարմին, որ ընդունակ կը լինի դիմադրելու պանգերմանիզմի նուաճողական տենչանքներին, ինչպէս և ամեն տեսակ արտաքին արշաւանքներին. մի մարմին՝ որի իւրաքանչիւր անդամ—ազգը կը վայելէ լիակատար անկախութիւն՝ իր հոգևոր-կուլտուրական ճակատագիրը տնօրինելու մէջ և ուր բոլոր անդամները, այժմեան ցեղերը առաջ կը տանեն ներդաշնակ գործակցութեամբ պետական ընդհանուր առաջադիմութեան ու բարգաւաճման գործը։

Եւ աւստրիական սոցիալիստական կուսակցութիւնը այսօր արդէն իրականացրել է ֆէդէրացիայի մեծ սկզբունքը իր կազմակերպութեան ձևի մէջ. այժմից արդէն նա գործում է իր մշակած ազգայնական ծրագրի ուղղութեամբ։

Որքան տարբեր է պատկերը Տաճկաստանում... Այնտեղ, դժբախտաբար, հեռն անգամ չը կայ միջազգայնութեան որև է ձևի, ինտերնացիոնալիզմի գէթ ամենադժգոյն արտայայտութեան։ Բիւրդ, հայ, տաճիկ, ասորի, արաբ, ալբան, չերքէզ, լազ, սիւրիացի, բուլգար, ռումէն, յոյն, սերբ և այլն և այլն,—որքան տարբեր՝ այնքան կենտրոնախոյս թռիչքներ, այնքան շփման ու անտագոնիզմի կէտեր։

Եւ հոգեկան ու մտաւոր՝ ոչ մի նմանութիւն. կուլտուրական շահերի՝ ոչ մի ընդհանրութիւն։ Մի մասն արդէն՝ հաղորդակից բարձր արևմտեան քաղաքակրթութեան, միւսը՝ դեռ սարուկ կիսավայրենի կոպիտ բարքերի։

Ի՞նչ ըէժիմ կարող կը լինէր հաշտեցնել նրանց... Հայը մինչև օրս գրեթէ միակ տարրն է, որ համերաշխութեան քարոզ էր խօսում այդ զարհուրելի Բաբելոնում, առանց—աւազ—արձագանք գտնելու։

Ուշագրաւ հանգամանք։ Այսօր հայ-մահմեդական համերաշխութեան մասին գրում են յաճախ կովկասեան հայ օրգաններում և «Դաշնակցութեան» դէմ բարձրացած վայնասունի մէջ պարզ հընչում է մի մեղադրանք, այն՝ որ իբր հայ յեղափոխականները մինչև օրս արհամարհել են այդ համերաշխութիւնը, չեն աշխատել նրա

համար, եղել են նեղ, տարամերժ ազգայնական, նացիոնալիստ, և իրանք, այդ սրտացաւ գանգատաւորները, մի մեծ գիւտ անողի տրամադրութեամբ «նոր մեթոդ» են առաջարկում թիւրքահայ խնդրի լուծման համար։ Եւ «Մէշվերէթի» Ահմէդ Բիզան, այդ «իսկական տաճիկ մարդը», ծափահարում է Պարիզից, իբր թէ երբէք նա չի լսել այդ մեթոդի մասին, իբր թէ նա քիչ է լսել համերաշխ կուլի ծանուցումներ հէնց Հ. Յ. Դաշնակցութիւնից...

«Նոր», բոլորովին նոր ճանապարհ են բաց անում մեր հայրենակիցները, նոր հորիզոններ, նոր դարագլուխ։

Ասես ոչինչ չի կատարուած իրենցից առաջ։ Ոչ մի փորձ, ոչ մի ճիգ ու ծրագիր։

Նոր մեթոդ, համերաշխութեան պրոպագանդ։ Դաշնակցութիւնը չէ, որ 10 տարուց ի վեր նոյն այդ համերաշխութեան քարոզն է հնչեցնում։ Դաշնակցութիւնը չէ, որ 10 տարուց ի վեր համերաշխ գործակցութեան բանակցութիւններ է վարում Երիտասարդ կոչուած Թիւրքիայի հետ, ծրագիրներ մշակում և—միշտ ապարդիւն, միշտ անաջողակ... Ո՞ւմ յանցանօք... Դաշնակցութեան օրգանը չէ, որ չը նայած իրականութեան դաժան դասերին, չը նայած մահմեդական ֆանատիկոսութեան հասցրած ահռելի աւերածներին, քարոզել է միշտ հայ ու մահմեդական տարրերի մերձեցում, հռչակել է միշտ թիւրք կառավարութեան մեղսակցութիւնը, արդարացրել է միշտ թիւրք ժողովրդին—թէ Եւրոպայի, թէ հայութեան առջև...

«Նոր մեթոդը» նոյնքան հին է, որքան ինքը Դաշնակցութիւնը։ Հայ-տաճկական, հայ-քրդական մերձեցման գաղափարը եղել է Դաշնակցութեան տենչանքներից մինը։ Նա քարոզել է և գործադրել է։ Նա գործադրել է խիստ սահմանափակ ծաւալով, անշուշտ։ Հայ յեղափոխականների համերաշխութեան յորդորներին պատասխանել են յաճախ անմիտ պրովոկացիաներով, նուրբ ու դժնդակ բարբարոսութիւններով։ Նրանց թռուցիկները արհամարհել են, նրանց գործակալներին, քարոզիչներին դիմաւորել են պաղ ու անսիրտ անտարբերութեամբ...

Եւ նրանք դարձեալ չեն վհատել։ Նրանք դարձեալ շարունակել են համերաշխութեան ու եղբայրութեան քարոզը լսեցնել—հայերէն, տաճկերէն ու արաբերէն հրատարակութիւններով, թռուցիկներով—յուսալով, որ մի օր, վերջապէս, խելքի կը գան այդ

բիրտ, ինքրտ մասսաները, որոնցից տակաւին բուրում է նախապատմութիւն ու վայրենութիւն։

1896-ի աշնանն էր, որ առաջին անգամը «Դրօշակի» խմբագրութիւնը մտաւ կանոնաւոր յարաբերութեան մէջ՝ Երիտասարդ Թիւրքիայի ակնաւոր ներկայացուցիչների հետ։ Երկու կողմերն էլ խիստ գոհ էին այդ մերձեցումից. Թիւրքերը հրապուրած էին նոր կատարուած Բանկ Օսմանի գրաւայով և չափազանց մեծ համարում ունէին մեր կազմակերպութեան ուժերի մասին, իսկ հայերը գիտէին միայն, որ բանակցողը, Երիտասարդ Թիւրքիան, անգին պրեստիժ էր վայելում Արևմուտքում, 1878-ի Սան-Ստեֆանոյ դրդերգութիւնից յետոյ։ Հայերը չը գիտէին, որ այդ պրեստիժը, այդ խիստ տարածուած, չափազանցրուած հռչակը մի պատրանք էր միայն։

Այդ պատրանքն էր, որ շուտով բացուեց Դաշնակցութեան առաջ. սկսուեց մի անարժան կատակերգութիւն։ Բանակցութիւններ-բանակցութիւնների ետևից։ Եւ ոչ մի արդիւնք։ Հիլմիներ, Տուրնալիներ, Հասան բէգեր, Սիւքիւթիներ—մաշեցին «Դրօշակի» խմբագրատան շէմքը իւրաքանչիւրը իր մշակած ծրագիրը բերաւ, իր տակտիկը, կուի լոզունգները։ Առանց, սակայն, կուի պատրաստութեան։ Առանց կուելու ամենաչնչին ցանկութեան։ Որքան ժամանակ ու միջոց վատնուեց, որքան թուղթ ու մելան գնաց։ Բանակցողներն անդրդուելի էին։ Շատ համարձակ՝ երբ հարկաւոր էր ծրագիրներ առաջադրել, բայց ապիկար և թուլամորթ՝ երբ պէտք էր իրագործել նրանց։

Ամեն անգամ, երբ հայ բանակցողները գնում էին վճռական, ցաւատանջ պահանջը, որ անհրաժեշտ է նախ և առաջ թև թափուած տապալել տիրող համիդիական ըէժիմը—Երիտասարդ Թիւրքիայի ներկայացուցիչները առաջ էին նետում ծրագրական խնդիրներ, օսմանութիւն, պան-տաճկութիւն, Միթհատեան սահմանադրութիւն և այլն և այլն, կամ թէ վերջապէս ընդունում էին հայերի կօնկրետ ու բանաւոր առաջարկը, առանց սակայն, առնելու իրենց վրայ գործնական որ և է քայլ անելու պարտաւորութիւնը։

Եւ դաշնակցականները եկան այն տխուր ու կսկծալի եզրակացութեան, որ նրանք գործ ունեն մի էապէս հակայեղափոխական համախմբման հետ։

Յետագայ փորձերը միշտ աւելի ու աւելի ամրապնդեցին

այդ համոզումը։ Կօնգրէս էլ գումարուեց, հաւաքուեցին Պարիզում զանազան տարբեր—մահմէդական ու քրիստոնեայ—արծարծուեցին բոլոր հարցերը. դաշնակցականները այդտեղ ևս դրին իրենց կօնկրետ առաջարկը՝ դիմել գործի անմիջապէս ու միահամուռ ջանքերով—դիմել գործի՝ ընդհանուր թշնամուն, սուլթանականութիւնը տապալելու համար։ Բայց այդ հէտերօժէն համախմբումից էլ ոչինչ չեղաւ, հայ պատգամաւորները զգացին իրանց՝ պաղ, սառցային մի միջավայրում... Բիզանները երևան հանեցին նեղ տաճկական շովինիզմ. մակեդօնացուն նրանք չէին ուզում ճանաչել իբրև մակեդօնացի, հայից պահանջում էին ջնջել, մոռանալ 61-րդ յօդուածը և դառնալ օսմանցի, ձգտել հեռու, անորոշ ապագայում դալիք տաճկական սահմանադրութեան։ Իսկ հայ պատգամաւորները չէին համաձայնուում թեթև սրտով ընջինջ անել միջազգային դաշնագրութիւնների իրաւական դոկումենտները, որոնք իրաւունք և պարտաւորութիւն էին դնում Եւրօպայի վրայ՝ միջամտելու թշուառ, մորթուող տաճկահայի ճակատագրի մէջ և որոնք, բացի այդ, սըրբագործած էին հարիւր հազար նահատակների արիւնով...

Կօնգրէսն էլ վիժեց, ինչպէս վիժել էին բոլոր բազմաթիւ բանակցութիւնները։ Երիտասարդ Թիւրքիան ցոյց տուեց իրան ծոյլ ու անգոյն, անշարժ, ինքրտ, ինչպէս մասսան. նա քաղաքական մանուկների, կարիերիստների սի համախմբումն էր, անբուժելի, զուրկ յեղափոխական տեմպերամենտից, զուրկ դաղափարական ամեն շաղախից։

Եւ կարիերիստների «ոգևորութիւնն» էլ վաղանցուկ եղաւ։ Նրանք համարեա բոլորն էլ, սուլթանական խոստումներով հրապուրած, չաղ պաշտօնների համիդիականների բանակը... նապարտը, վերադարձան համիդիականների բանակը...

Գիտենք, անշուշտ, որ կարող են լինել և շատ յարգելի ու գաղափարական անհատներ նոյնիսկ այդ «Երիտասարդ Թիւրքիայի» մէջ թէ կենտրօններում, թէ գաւառներում, թէ աքսորատեղերում։ Բայց դրանք էլ սոսկ անհատներ են, որոնք հեռու են եղել մասսաներից և ոչ մի իրական յեղափոխական գործ չեն կատարել, չը նայած այնքան, համեմատաբար, նպաստաւոր պայմաններին, որոնց մէջ գտնուել են նրանք, իբրև թիւրք տարր։

Գիտենք և այն՝ որ այսօր հանդէս է եկել իշխան Սէրահէդդինի գեկավարութեամբ մի նոր հոսանք, որը քարոզում է իր դիմի գեկավարութեամբ մի նոր հոսանք, որը քարոզում է իր օրգանի միջոցով նոր գաղափարներ—հաշտարարութիւն քրիստոնեայ

նեանների հետ, ապակենտրոնացման, ֆէդերացիայի սկզբունք և այլն։ Բայց նա էլ խիստ կարճատև կեանք ունի և մենք չը գիտենք, թէ ինչ դուրս կը գայ նրանից ապագայում։ Դառն փորձերն են, որ սովորեցրել են մեզ սկեպտիկ լինել։ Հայ յեղափոխականը ծափահարել է միշտ, ողջունել է միշտ և ցնծութեան աղաղակ է հանել ամեն մի թռուցիկի ու յօդուածի առթիւ, որ հրատարակւել է օսմանեան երիտասարդ թիւրքերի կողմից. բայց այդ ցնծութիւնը կարճատև է եղել, նա միշտ փոխարկւել է ամենադառն յուսախաբութեան։...

Իսկ ի՞նչ է ներկայացնում այն խորհրդաւոր ուժը, որ առաջ բերեց վերջին ժամանակ թիւրք ժողովրդական յայտնի յուզումները Տաճկաստանում և որը կարող էր թերևս դեռ խաղալ վաղուան Թիւրքիայի կազմակերպման գործում...

*
* *

Ի՞նչ են այդ նոր բռնկւած շարժումները Տաճկաստանում, մասսային ցոյցերը Էրզրումում, Կաստամունիում և ուրիշ տեղերում։

Ո՞ր աստիճան նրանք, այսպէս ասած, տարերային են և ո՞ր աստիճան կազմակերպւած. կա՞ն առաջնորդներ, կա՞յ ղեկավարող մտաւորականութիւն... Այդ էլ, դժբախտաբար, խիստ առեղծւածային է, պատած մշուշի ու խորհրդաւորութեան թանձր քօղով։

Գիտենք միայն, որ դա յաժենայն դէպս զուտ մահմէդական մի շարժում էր, տաճիկ-ամբոխային մի շարժում, որ բռնկւեց բոլորովին յանկարծակի, առանց որևէ օտար տարրի մասնակցութեան կամ աջակցութեան, և որը բացարձակ ըմբոստացումն էր սուլթանական բիւրոկրատիայի դէմ, տուրքերի ծանրութեան դէմ, պաշտօնեաների սանձարձակ կեղեքումների դէմ։

Ուզում ենք հաւատալ, որ ինտելիգենտ, գիտակից միտքը ունեցել է իր բաժին դերը այդ անակնկալ խլրտման գործում։ Ուզում ենք ընդունել, որ ճիշտ են տարածւած շշուկները՝ թէ յուզումների ընթացքում մահմեդականները հաւերաշխութեան ծանուցումներ են արել հայերին...

Կուզէինք հաւատալ, մի խօսքով, որ կայ այժմից հրապարակի վրայ մի նոր Երիտասարդ Թիւրքիա, տարբեր նախկինից, աւելի ձեռնհաս, աւելի կորովի ու գաղափարական և, որ գլխաւորն է՝

տոգորւած յարգանքի ու համերաշխութեան զգացումներով՝ դէպի «գեաւուրները»...

Միմիայն այդ ոյժն է, իսկապէս, որ կարող էր, հետզհետէ լայնանալով ու հող բռնելով, մաքառել աջողութեամբ ներքին ու արտաքին կազմալուծող հոսանքների դէմ և անխախտ պահել Տաճկաստանի ամբողջութիւնը։ Առանց այդ անհրաժեշտ գործօնի, առանց մի նոր, յեղափոխական ու քաղաքացիական գիտակցութեան հասած Երիտասարդ Թիւրքիայի՝ Օսմանեան կայսրութեան վիճակը, նրա ամբողջութեան դաւանանքը լինելու է միշտ խախուտ, երերուն, ենթակայ ամեն տեսակ պատահարների։

Եթէ ժառանգական ու այլ կնճիռները հարթելուց յետոյ՝ խալիֆական գահ բարձրանայ par impossible մի լաւ սուլթան, ներշնչւած լուսաւոր գաղափարներով, նա անկարող կը լինի կառավարել բովանդակ երկիրը արդարութեամբ ու խաղաղութեամբ։ «Լուսաւորեալ բռնապետութիւնների» ժամանակը անցած է արդէն, նրանք անկայուն, անհնարին կը լինին մասնաւորապէս Տաճկաստանում։ Կայսրութիւնը իր ամբողջ կազմով ապրում է կէս-հնադարեան, կէս-միջնադարեան պայմաններ։ Տնտեսական կեանքը, որ խթանն է հասարակական ընդհանուր առաջադիմութեան՝ կատարելապէս անդամալուծւած է. երկրի մեծագոյն մասը դեռ համարեա բնական տնտեսութեան շրջանն է ապրում։ Առևտրական կապիտալն անգամ կաշկանդւած է, չը կայ նոյնիսկ վաճառական դասակարգ — ռէժիմը հնձել է, անողորմ կերպով ցամաքեցրել կեանքի բոլոր աղբիւրները։

Դրա հետ միասին պետութեան ամբողջ մեխանիզմը, օրէնսդրութիւնը, ադմինիստրացիան, դատավարութիւնը—փտած ծայրէ ծայր... Արդիւնաբերութեան ու առևտրի խոպառ բացակայութեան շնորհիւ—մշտնջենական ֆինանսական տագնապ... Եւ բիւրոկրատիան—գայլերի ու բորենիների մի հսկայական վոհմակ, որ անյագ ծծում է ժողովուրդների արիւն-աշխատանքը, քայքայում է նրանց տնտեսութիւնը, առանց երբեք հոգ տանելու նրանց մասին, դէթ իբրև կաթնատու կովերի։

Այդտեղ է խոր, արիւնահոս վէրքը։

Սպանդանոցները, մասսային ջարդերը կարող են դադարել և կը դադարեն։ Բայց կազմակերպւած թալանը կը շարունակի, իբրև տնտեսական և քաղաքական մի ֆատալ անհրաժեշտութիւն. ժողովուրդները կը շարունակեն արիւնաքամ լինել բրօնիկական

դարձած սովից, մերկ ու կիսաքաղց վիճակից։ Այդտեղ է, որ դարման պիտի գտնել։

Ո՞վ է դարմանողը...

Վաղուան սուլթանը, որքան էլ նա անհատապէս տոգորուած լինի բարենորոգչական տրամադրութիւններով, շատ քիչ բան կը կարողանայ անել այդ ուղղութեամբ։ Աւելին կասենք. եթէ անգամ—ինչպէս լուր է պտտում եւրոպական մամուլի մէջ—Երիտասարդ Թիւրքերը աշխատեն իրենց ձեռքը ձգել վաղուան կառավարութեան դեկը և գահ նստեցնել մի սահմանադրական—միթհադեան սուլթան,—դարձեալ շատ քիչ յոյս է մնում, որ Թիւրքիայի կայսրութիւնը կարողանայ բարենորոգուել ի շահ և ի երջանկութիւն բոլոր հպատակ ժողովուրդների։

«Հիւանդ մարդը»—անյոյս հիւանդ է... և նրան բժշկելու համար՝ թերևս պէտք է լինի օտար բժիշկների միջամտութեան...

Երկրի հիմնական, արմատական վերանորոգութեան խնդիր է դրուած։ Պէտք է համարեա նորից կեանք ստեղծել,—աշխատանք, առևտուր, արդիւնագործութիւն. պէտք է ստեղծել նոր իրաւագրգ, դատաստանական և գործադիր նոր ֆունկցիաներ, պէտք է ստեղծել նոր պաշտօնէութիւն, նոր օրէնսդրութիւն...

Ո՞վ պիտի ստեղծէ, ինչպէ՞ս պիտի ստեղծէ։ Ո՞ւր են դրա համար անհրաժեշտ գործօնները։ Ո՞ւր են մարդիկ...

Օրէնքները կարող են գրել։ Վաղուան սուլթանը կամ թէական պարլամենտը կարող են հրատարակել մի շարք մոդերն, համակրելի օրէնքներ, բայց ի՞նչ արժէք կունենան նրանք։ Ո՞վ չը գիտէ, որ տաճկական օրինագրքերի մէջ կան շատ համակրելի, միանգամայն ժամանակակից յօդուածներ, օրէնքներ աղգերի ու կրօնների հաւասարութեան մասին և այլն։ Բայց ե՞րբ են նրանք գործադրուել... Մի երկրի օրինաւորութեան ու արդարութեան չափը որոշւում է ոչ թէ գոյութիւն ունեցող օրէնքներով, այլ այն գործադրութեամբ, որ այդ օրէնքները ստանում են։

Մարդի՞կ են հարկաւոր... Not mesures, but men!—ասել է անմահ Գլադստոն, Տաճկաստանի բարենորոգման մասին խօսելիս։ «Ո՞չ միջոցներ, այլ մարդիկ»...

Եւ հէնց այդ մարդիկն են, որ պակասում են տաճկական իրականութեան մէջ, ուր շարիաթը, դարաւոր բարքերը, ցեղակրօնական աննպաստ պայմանները, մի շարք ծանր տարկանոնութիւն-

ներ կաշկանդել են մտաւոր-կուլտուրական ամեն մի թռիչք, անհատական ամեն ինիցիատիվ...

Մարդի՞կ են հարկաւոր...

Կը գտնուի՞ն արդեօք տաճկական սահմանադրականների մէջ բաւականաչափ այդպիսի մարդիկ, որոնք կարողանան արդար ու խելացի քաղաքականութեամբ կապել, շաղկապել բոլոր այլազան ազգութիւնները... Աւելի ստոյգը, հաւանականը է այն չէ՞, որ այդ պրօբլեմատիկ սահմանադրութիւնը իր տաճկական զերիշխանութեամբ կը դառնայ մի նոր ճնշիչ մեքենայ ժողովուրդների համար, որ նրան երբէք սիրողաբար չեն հպատակի ոչ մակեդոնացիք, ոչ արաբները, ոչ հայերը, ոչ ալբանները։

Ահա մի շարք խիստ կարդինալ հանգամանքներ, որոնք չափազանց առեղծուածային են դարձնում Տաճկաստանի առաջիկայ կերպարանաւորման խնդիրը։ Արդեօք «Հիւանդ մարդը» պիտի կարողանայ շարունակել ինքնուրոյն գոյութիւն, թէ՞ նորից գեարողանայ վուր-ուժերը պիտի գան կանգնեն նրա մահճի մօտ, Գորչակովի արձակած լոզունգով. Autonomie ou anatomie! (Ինքնավարութիւն կամ անդամահատութիւն)...

Անշուշտ, ազգերի աւտոնոմիայի իրագործումը ֆէդէրատիւ Տաճկաստանում՝ լաւագոյն միջոցը կըլինէր ազատելու տաճկական կայսրութիւնը վերջնական անդամահատութիւնից, տարբերուածումից, արտաքին ուժերի «կլանողական» ախորժակներից։

Տաս տարուց իվեր Հ. Յ. Դաշնակցութիւնը քարոզում է այդ գաղափարը իր հրատարակութիւնների մէջ, իբրև իր հիմնական քաղաքական credo-ն, որ նա ուզում է իրագործել նոյնիսկ «հայկական վիլայէթների» սահմանափակ շրջանում, և որ այսօր նա առաջադրում է նաև Ռուսաստանում։

Տարաբախտաբար, շատ քչերն են ականջ դրել Դաշնակցութեան յորդորներին, և մասնաւորապէս, Երիտասարդ Թիւրքիան՝ տոգորուած մինչև ուղուածուածը նեղ տաճկական շովինիզմով, յափշտակուած Միթհադեան կասկածելի սահմանադրութեան «փրկարար» հեռանկարով՝ ցոյց է տուել միշտ արհամարհոտ անտարբերութիւն դէպի «գեավուրների» յայտարարած ինչ որ «ֆէդէրատիւ Թիւրքիայի» գաղափարը...

Այսօր, սակայն, Դաշնակցութեան քարոզը արձագանք է գտնում նոր ուղղութեան «Երիտասարդ տաճիկների» մէջ, որոնք խիստ հակում են ցոյց տալիս մօտենալու դաշնակցականներին

և որոնք այսօր իրենց արտասահմանեան հրատարակութիւնների մէջ—Իշխան Սաբահէդդինի ղեկավարութեամբ—եռանդով արծարծում են ֆէդէրացիայի սկզբունքը։ Մնում է յուսալ, որ շրջահայեաց թիւրք ինտելիգենտների այդ քարոզը հող գտնէ տաճկական լայն խաւերում, որ տիրապետող ցեղը իդէմս իր լաւագոյն մտաւորականութեան, համակուի այն գիտակցութեամբ՝ որ ֆէդէրացիան միակ գրաւականն է բոլոր ազգերի և ամբողջ պետութեան նօրմալ, անխախտ առաջադիմութեան։

ՎԵՐՋ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Բախ.—Հարուստներ և աղքատներ. II տպագրութիւն. . . 15 կոպ.
2. Պեէխսնով.—Հաց, յոյս և ազատութիւն . . . . . 12 »
3. Ֆէդորովիչ.—Ինչպէս են ժողովում և ծախսւում ժողովրդական փողերը 5 »
4. Կարմոլիւկ.—Նոր լերան քարոզը . . . . . 2 »
5. Ձերնով.—Գիւղացին և բանուորը . . . . . 15 »
6. Պերնեrnsordիr.—Ազգային հարցը և սոցիալդեմոկրատիան . 5 »
7. Գրամպոլինի.—Գիւղացիներին . . . . . 5 »
8. Ե. Թոմչեան.—Արհեստակցական միութիւններ . . . 15 »
9. Նոլsordսկի.—Ինչ է իրաւական պետութիւն . . . 15 »
10. Ն. Կարանով—Հողային հարցը Նոր Զելանդիայում . . . 2 »
11. Ժան Ժորէս.—Բուրժուական սեփականու. և նրա ապագայ զրաւումը 5 »
12. Ս. Աբեղեան.—Դեմոկրատական ընտրութիւն. . . . 12 »
13. Կարլ Կաուտսկի—Ազգութիւնների հարցը Ռուսաստանում . 3 »
14. Ս. Ա.հարոնեան.—(Ղարիբ)—Ազատութեան ճանապարհին . 80 »
15. Ֆ. Լասալ.—Սահմանադրութեան էութեան մասին . . 5 »
16. Ա. Ն.—Ինչպէս կարելի է լուծել հողային հարցը . . 12 »
17. Վասիլիյ Գալուբով—Ինչ է ժողովրդապետութիւնը . . 2 »
18. Ս. Զուարեան.—Վիճակ. տեղ. գիւղական ազգաբ. . . . 25 »
19. Ալֆոնս Դիւնոն.—Ժողովրդական օրէնսդր. դաշնակ. Զուիցերիայում 20 »
20. Դիկոտէյն.—Ով ինչով է ապրում . . . . . 7 »
21. — Մի զրոյց հողի մասին . . . . . 5 »
22. Լ. Շիշկո.—Ագրարային ծրագրի հարցը և գիտական սոցիա. տեսութ. 7 »
23. Ա. Նիկոլայեվ —Կոոպերացիա . . . . . 15 »
24. Շտապեցէք օգտուել ձեր իրաւունքներից . . . . . 1 »
26. Ս. Վ.ոսէկ.—Պետական կազմակերպ. հիմքերը Արևմուտքում 12 »
27. Անկիլ—Գիւղացիական հարցը Ֆրանսիայում . . . 7 »
28. Միխայէլ Յովհաննիսեան.—Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները 50 »
29. Ժ. Գէդ եւ պ. Լաֆարգ.—Տնտեսական զարգացումը և Սոցիալիզմը 5 »
30. Նոլsordսկի.—Ազգային հարց. Աւտոնոմիա և ֆեդերացիա . 7 »
32. Միխայէլ Յովհաննիսեան.—Գորդեան հանգոյցը (Թուրքահայոց հարցի վերջին շրջանը) . . . . . 20 »
33. Հրահանգներ գաւառների համար . . . . . 1 »

Պատրաստւում են տպագրութեան համար.

1. Աբամայիս.—Գաղափ. ճանապարհին.
2. Զակ.—Հող և կապիտալիզմ.
3. Ձերնով.—Պրոլետարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը.
4. Լաւրով.—Պատմական նամակներ.
5. Վիխլիսեւ.—Ագրարային հարցը իրաւաբանական տեսակէտից.
7. Շիշկո.—Ծրագրային հարցերից.
8. Ձերնով.—Դասակարգային կուսի տեսիս.
9. Ձերնով. Մոնիստական տեսակէտը Սոցիոլոգիայի և հոգեբանութեան մէջ.
10. Վանդերվելդ.—Բանուորական հարցը Բելգիայում.
11. Լասալ.—Աշխատաւորների ծրագիրը.
12. Միջազգային Սոցիալիզմը և ազգութիւնների կռիւը Աւստրիայում. (Բրիւնի Պարտայտաղ).

«Ազգային գրադարան»
NL0415965